PROPERTY OF THE
A U A PAPAZIAN LIBRARY

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

AMERICAN UNIVERSITY OF ARMENIA

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ • ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ ԵՎ ԿՈՉՈՒՄՆԵՐ

1994–1996

378.155
AME

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
AMERICAN UNIVERSITY OF ARMENIA

Ընդհանուր տեղեկություններ
Դասընթացներ և կոչումներ

1994–1995
1995–1996

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հայաստան, Երևան 375019
Մարշալ Բաղրամյան պողոտա, 40
Տեղական հեռախոս 27–10–85 կամ 27–09–53
Միջազգային հեռախոս (7–8852) 15–10–49
Միջազգային ֆաքս (7–8852) 15–10–48

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Լեյքսայդ Դրայվ 300, 22-րդ հարկ
Օքլենդ, Կալիֆորնիա, 94612
Հեռախոս (510) 987–9452
Ֆաքս (510) 208–3576

Դասընթացներ և կոչումներ, Հայաստանի ամերիկյան համալսարան 1994–1995 և 1995–1996 ուսումնական տարիներ

ՀԱՀ-ը ռասայական, ազգային, սեռի և կրոնի խտրականություն չի դնում: Այս տեղեկատուն կարելի է ձեռք բերել Հայաստանի ամերիկյան համալսարանից՝ Երևանում, կամ համալսարանի Միացյալ Նահանգների հասցեով, ուղարկելով 5,00 ամերիկյան դոլարի անդորրագիր կամ միջազգային դրամով պատվեր (որն ընդունում է Հայաստանի ամերիկյան համալսարանի ընկերությունը): Համալսարանի մասին հետագա տեղեկությունների համար դիմեք ՀԱՀ-ի ուսանողների վարչական ծառայությունների գրասենյակ (27–10–85) կամ համալսարանի Միացյալ Նահանգների գրասենյակ:

Բոլոր իրավունքները վերապահված են: Այս հրատարակության ոչ մի մասը չի թույլատրվում վերարտադրել, պահել վերականգնող համակարգում կամ տեղափոխել որևէ կերպ, լինի դա էլեկտրոնային, մեխանիկական ճանապարհով, արտատպման, ձայնագրման կամ այլ միջոցներով՝ առանց Հայաստանի ամերիկյան համալսարանի ընկերության գրավոր թույլտվության: Բոլոր հարցերով պետք է դիմել համալսարանի Միացյալ Նահանգների գրասենյակ:

Տեղեկատուի հայերեն տարբերակը թարգմանված է անգլերեն բնագրից: Քանի որ առկա տեղեկությունները չափազանց սեղմ ժամկետում ճշգրտորեն ի մի բերելու համար ջանք չի խնայվել, ուստի համալսարանն իրեն իրավունք է վերապահում կատարել փոփոխություններ, առանց այդ մասին նախապես տեղեկացնելու: Նոր տեղեկություններ կարելի է ստանալ համալսարանի համապատասխան գրասենյակներից:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՀ-Ի ՄԱՍԻՆ: ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նախագահի ուղերձը 4
ՀԱՀ-ի տնօրենների խորհուրդը 1993–1994 ուս. տարում 8
ՀԱՀԸ-ի Հոգաբարձուների խորհուրդը 1993–1994 ուս. տարում 9
Ֆինանսական աջակցությունը 10
1994–1995 ուս. տարվա օրացույցը 11
1995–1996 ուս. տարվա օրացույցը 12
Համալսարանի պատմությունը 13
ՀԱՀ-ի առաքելությունը 14
Ուսանողությունը 15
Համալսարանի համալիրը 15
Կազմակերպումը և ղեկավարումը 16
Ուսումնական ծրագիրը 16
Անգլերենի արագացված ուսուցման ծրագիրը 17
Համալսարանի գրադարանը 17
Համակարգչային հնարավորությունները 18
Հատուկ դասընթացների բաժինը 18
Ուսման վարձը և ֆինանսական օգնությունը 19
Բնակարաններով ապահովելը 20
Հայաստանի մասին 21

ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

Ընդունելությունը և ուսումնական քաղաքականությունը 24
Ընդունելությունը 25
Գրանցումը և ծրագրային դասընթացները 29
Ուսումնական քաղաքականությունը 30

ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԸ, ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ

Գործարարության և կառավարման բոլեջ 33
Դասախոսական կազմը 35
Դասընթացները 37
Ճարտարագիտության բոլեջ 41
Դասախոսական կազմը 43
Երկրաշարժակայուն ճարտարագիտության բաժին 46
Դասընթացները 46
Արդյունաբերական ճարտարագիտության բաժին 48
Դասընթացները 48
Քաղաքագիտության և միջազգային հարաբերությունների դպրոց 51
Դասախոսական կազմը 53
Դասընթացները 54

ՎԿԱՅԱԳԻՐ ՇՆՈՐՀՈՂ ԾՐԱԳՐԵՐ

«Անգլերենի՝ որպես օտար լեզվի ուսուցումը» 56
«Հասարակական առողջապահություն» 57

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ

Գործարար հետազոտությունների և զարգացման կենտրոն 59
Տնտեսական քաղաքականության հետազոտության և վերլուծության կենտրոն 60
Ճարտարագիտական հետազոտությունների կենտրոն 60
Շրջակա միջավայրի հետազոտման և կառավարման կենտրոն 61

ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՅԱՆԵՐԸ 1994 – 1995ԹԹ.

ՆԱԽԱԳԱՀԻ ՈՒՂԵՐՁԸ

Դոկտոր Միհրան Աղբաբյանը 1991 թ. դարձավ Հայաստանի ամերիկյան համալսարանի առաջին նախագահը: Լինելով ճարտարագիտության վաստակավոր պրոֆեսոր և Հարավային Կալիֆորնիայի քաղաքացիական ճարտարագիտության ամբիոնի նախկին վարիչ, Աղբաբյանը ընտրվել է ճարտարագիտության ազգային ակադեմիայի և Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի անդամ: Նա նաև ստացել է Բերքլիի Կալիֆորնիայի համալսարանի ճարտարագիտության պատվավոր շրջանավարտի մրցանակը: Աղբաբյանն աշխատել է գիտությունների ազգային ընկերության, ազգային հետազոտությունների խորհրդի և Կալիֆորնիա նահանգի խորհրդակցական հանձնաժողովներում:

Կրթությունը և հետազոտական աշխատանքը շատ կարևոր են մի երկրի համար, որը որոշել է իր ապագան կառուցել ժողովրդավարության սկզբունքներով: Հայաստանի ռազմավարական նպատակները որոշում է կառավարությունը, սակայն երկրի ապագան որոշում են նրա քաղաքացիները, որոնք ընտրում են իշխանություն և նրան տալիս կառավարելու իրավունք: Ավելին, Հայաստանի տնտեսական աճը կախված կլինի կառավարության և Հայաստանում նոր ձևավորվող մասնավոր սեկտորի համագործակցությունից: Սա արմատական նորամուծություն է Հայաստանում և նախկին Խորհրդային Միության մյուս անկախ պետություններում:

Հայաստանի երիտասարդության խնդիրն է դառնալ լավ քաղաքացիներ և կարևոր ներդրումներ կատարել իրենց երկրի ու տարածաշրջանի տնտեսական և քաղաքական զարգացման գործում:

Հայ երիտասարդության պատմությունը դժվարություններին հարմարվելու և փորձություններ դիմակայելու փառավոր օրինակ է:Հայաստանին ապագայում սպասում են բազմաթիվ նոր դժվարություններ: Դա նոր սկիզբ է երկրի և տարածաշրջանի երիտասարդության համար: Հայաստանի ամերիկյան համալսարանը, հայ ժողովրդի հետ միասին, կրթության և գիտական աշխատանքի հնարավորություններ է ստեղծում Հայաստանի և տարածաշրջանի երիտասարդության համար: ՀԱՀ-ում ընդունված կրթության ամերիկյան ձևը հիմնված է բաց քննարկումների և անկախ մտածողության վրա:

Սկզբնական շրջանում շեշտը դրված էր ճարտարագիտության, գործարարության և գործարար ղեկավարման մագիստրոսի կոչում շնորհող ծրագրերի վրա: 1994 թ. գարնանը համալսա-

ռանում բացվեց նաև քաղաքագիտության բաժին՝ մագիստրոսի կոչման շնորհումով: Համալսարանի գործունեությունն ընդլայնելու համար նախատեսվում են նաև այլ ոլորտի ուսումնասիրություններ: Որովհետև մենք հավատում ենք, որ Երևանի պետական համալսարանի և մյուս ինստիտուտների շրջանավարտներն ունեն բարձր մակարդակի կրթություն և տիրապետում են իրենց մայրենի լեզվին, որոշեցինք այդ ամուր հիմքի վրա սկսել մագիստրոսի կոչման շնորհմամբ ծրագրերը: Դասավանդման լեզուն անգլերենն է, քանի որ այն հնարավոր է դարձնում միջազգային հաղորդակցությունը, ինչպես նաև տարածաշրջանի ու ամբողջ աշխարհի հետ տնտեսական և քաղաքական կապերի հաստատումն ու ամրապնդումը: ՀԱՀ-ի առաջին երեք ուսումնական տարիների փորձը լիովին արդարացրել է այս որոշումը:

Ամուր կրթական համակարգի գրավականը հետազոտական աշխատանքը դասերի հետ համատեղելն է: ՀԱՀ-ի հետազոտական կենտրոնները մեր ուսանողներին հնարավորություն են տալիս դասախոսների և լայն ճանաչում ունեցող տեղացի մասնագետների հետ միասին կատարել հետազոտական աշխատանք: Հայաստանում գիտության և արվեստի բնագավառներում կան բազմաթիվ տաղանդավոր մարդիկ, որոնց պետք է տալ աճելու և ծաղկելու լայն հնարավորություն: Մենք համոզված ենք, որ այս հետազոտական գործունեության արդյունքում հիմնարար և կիրառական գիտությունների ասպարեզներում կառաջադրվեն նոր գաղափարներ, որոնք կնպաստեն ինչպես ուսանողների իմացական զարգացմանը, այնպես էլ հասարակության զարգացմանն ընդհանրապես:

Ինձ մեծագույն հաճույք և բավականություն են պատճառում մեր ուսանողների նվիրվածությունն ու աշխատասիրությունը: Դասախոսներն ու աշխատակազմը ավելի մեծ ջանասիրությամբ են կատարում իրենց պարտականությունները, տեսնելով, որ իրենց ուսանողները նույն խանդավառությամբ են նախապատրաստվում ղեկավար պաշտոններ զբաղեցնելուն:

Այս տեղեկատուն տեղեկություններ է տալիս ընդունելության ընթացակարգի, ուսումնական ծրագրերի և ավարտելու պահանջների վերաբերյալ: Նախատեսվում է խրախուսել և ընդառաջել խոստումնալից ուսանողներին՝ դիմելու ՀԱՀ և մասնակցելու նրա առաքելության իրականացմանը:

Ֆինանսական օժանդակությունը տրամադրվում է Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության և գիտության նախարարության և Միացյալ Նահանգներում ու այլ երկրներում բնակվող հայազգի անհատների կողմից: ՀԱՀ-ը կտրականապես դեմ է ամեն տեսակի խտրականության և հավասար հնարավորություններ է տալիս բոլոր ուսանողներին՝ անկախ նրանց հավատից, ռասսայից, ազգային ու ցեղային պատկանելությունից և սեռից:

ՀԱՀ-ում բոլորս խորապես հավատացած ենք, որ Հայաստանի, տարածաշրջանի և ամբողջ աշխարհի համար կբացվեն նոր հորիզոններ և նոր հնարավորություններ:

Միհրան Ս. Աղբաբյան





«Հայաստանի ամերիկյան համալսարանը կարևոր իրադարձություն է մեր մշակութային և գիտական կյանքում: Ի՞նչ ենք մենք ակնկալում այս համալսարանից: Որքան էլ որ տաղանդավոր լինենք, մեր հաստատություններում մենք կարիք ունենք նոր մտածողության, և այս համալսարանի գոյությունը Հայաստանում մեզ հնարավորություն կտա ձեռք բերել այդ նոր մտածողությունը»:

ԼԵՎՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ
Հայաստանի Հանրապետության նախագահ

ՀԱՀ-ի շենքը
Հայաստանի մայրաքաղաք Երևանի կենտրոնում
Մարշալ Բաղրամյան պողոտա, 40

ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Հայաստանի Ամերիկյան Համալսարան, 1993–94 ուս. տարի

ՄԻՀՐԱՆ ԱՂԲԱԲՅԱՆ
Հայաստանի ամերիկյան համալսարանի նախագահ
Հարավային Կալիֆորնիայի համալսարանի երկրաշարժակայուն ճարտարագիտության վաստակավոր պրոֆեսոր

ԲԱԲԿԵՆ ԱՐԱՐՔՑՅԱՆ
Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի նախագահ

ՈՒԻԼՅՄ Ռ. ՖՐԵՅԶԵՐ
Հայաստանի ամերիկյան համալսարանի ընկերակցության նախագահ
Բերքլիի Կալիֆորնիայի համալսարանի
ֆիզիկայի պրոֆեսոր

ՎԱՐԴԳԵՍ ԳՆՈՒՆԻ
Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության և գիտության նախարար

ԳԱԳԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Հայաստանի Հանրապետության փոխնախագահ

ՎԻԼԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Հայաստանի Լազերային ինստիտուտի տնօրեն
Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության և գիտության նախկին նախարար

ՄԵՐԵԴԻՏ ԽԱՉԻԿՅԱՆ
Կալիֆորնիայի համալսարանի խնամակալների խորհրդի անդամ
խնամակալների խորհրդի նախկին նախագահ

ՋՈՆ Ա. ՄԱՐԿՈՒՄ
Կալիֆորնիայի համալսարանի արտերկրյա կրթության ծրագրի տնօրեն

ԼՈՒԻԶ ՍԻՄՈՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ
Հայ բարեգործական ընդհանուր միության նախագահ

«Հայաստանի ամերիկյան համալսարանի հիմնադրումը կարևոր ուղենիշ է հանրապետության կրթական և գիտական համակարգի համար: Մենք խորապես երախտապարտ ենք Կալիֆորնիայի համալսարանին, Հայ բարեգործական ընդհանուր միությանը և Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալությանը՝ այս համալսարանի հիմնադրմանն ու զարգացմանն ուղղված նրանց ջանքերի և աջակցության համար: Հավասարապես երախտապարտ ենք նաև մյուս բոլոր աջակիցներին, համալսարանի ղեկավարությանը, դասախոսական կազմին, աշխատակիցներին և բոլոր կամավորներին, որոնց նվիրական աշխատանքը հնարավոր դարձրեց համալսարանի գործունեությունը:

ՀԱՀ-ն առանցքային դեր կխաղա Հայաստանի և Միացյալ Նահանգների միջև գիտական, կրթական ու մշակութային կապերի հաստատման և ամրապնդման գործում:

Նախարարության անունից ես համալսարանին և ուսանողներին հաջողություն եմ մաղթում իրենց ուսումնական և գիտական ծրագրերում»:

Դոկտոր ՎԱՐԴԳԵՍ ԳՆՈՒՆԻ
Հայաստանի Հանրապետության
բարձրագույն կրթության և գիտության
նախարար

ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Հայաստանի Ամերիկյան Համալսարանի Ընկերակցություն, 1993–94 ուս. տարի

« Կալիֆորնիայի համալսարանը հպարտ է, որ ՀԱՀ-ի հետ մեկտեղ բարձրագույն կրթության ամերիկյան ձևը ներմուծում է նախկին Խորհրդային Միության հանրապետություններ»:

ՈՒԻԼՅՄ Ռ. ՖՐԵՅԶԵՐ



Դոկտոր Ուիլյամ Ռ. Ֆրեյզերը ընտրվել է ՀԱՀԸ-ի հոգաբարձուների խորհրդի առաջին նախագահ և ՀԱՀ-ի տնօրենների խորհրդի նախագահ: Լինելով Բերքլիի Կալիֆորնիայի համալսարանի ֆիզիկայի պրոֆեսոր և Կալիֆորնիայի համալսարանի ուսումնական գծով նախկին ավագ փոխնախագահ, Ֆրեյզերը հեղինակություն է վայելում փոխազդող մասնիկների տեսության բնագավառում: Նրա աշխատությունները հիմնականում նվիրված են բազմամասնիկ փոխազդեցությունների երևութաբանությանն ու քվանտային քրոմոդինամիկային:

ՈՒԻԼՅՄ Ռ. ՖՐԵՅԶԵՐ, խորհրդի նախագահ
Բերքլիի Կալիֆորնիայի համալսարանի ֆիզիկայի պրոֆեսոր, Կալիֆորնիայի համալսարանի ուսումնական գծով նախկին ավագ փոխնախագահ

ՄԻՀՐԱՆ ԱՂԲԱԲՅԱՆ, նախագահ
Հարավային Կալիֆորնիայի համալսարանի երկրաշարժակայուն ճարտարագիտության վաստակավոր պրոֆեսոր

ԱՐՄԵՆ ՏԵՐ-ԿՅՈՒՐԵՂՅԱՆ
Բերքլիի Կալիֆորնիայի համալսարանի քաղաքացիական ճարտարագիտության պրոֆեսոր

ՎԱՐԴԱՆ ԳՐԵԳՈՐՅԱՆ
Բրաունի համալսարանի նախագահ

ՍՏԵՓԱՆ ԿԱՐԱՄԱՐԴՅԱՆ
Ռիվրսայդի Կալիֆորնիայի համալսարանի կառավարման բարձրագույն դպրոցի նախկին դեկան

ՄԵՐԵԴԻՏ ԽԱՉԻԿՅԱՆ
Կալիֆորնիայի համալսարանի խնամակալների խորհրդի անդամ, խնամակալների խորհրդի նախկին նախագահ

ՋՈՆ Ա. ՄԱՐԿՈՒՄ
Կալիֆորնիայի համալսարանի արտերկրյա ուսումնական ծրագրի տնօրեն

ՌՈԼԹՐ ՄԵՍԵՅ
Կալիֆորնիայի համալսարանի ուսումնական գծով ավագ փոխնախագահ

ՔԱՐԼ Ս. ՓԻՍԹՐ
Սանտա Կրուզի Կալիֆորնիայի համալսարանի ռեկտոր

ԼԻՄԱՆ Վ. ՓՈՐԹՐ, գանձապահ
Իրվինի Կալիֆորնիայի համալսարանի կառավարման բարձրագույն դպրոցի պրոֆեսոր

ԴԵՅՎԻԴ ՍԱՔՍՈՆ
Կալիֆորնիայի համալսարանի վաստակավոր նախագահ
MIT ընկերակցության վաստակավոր նախագահ

ՊԵՐՃ ՍԵԴՐԱԿՅԱՆ
«Ուիլյամ և Ռենսոմ» իրավաբանական գրասենյակի ընկերակից, Նյու Յորք

ԼՈՒԻԶ ՍԻՄՈՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ
Հայ բարեգործական ընդհանուր միության նախագահ

ԲԱՐԻ ՋՈՐԹՅԱՆ
«Ալկալդ և Ֆեյ» գրասենյակի ընկերակից

ԹԵՈՆԻ ԿՈՆԴՈՍ, քարտուղար
Կալիֆորնիայի համալսարանի ուսումնական գծով ավագ փոխնախագահի հատուկ օգնական

ՎԱՐԴԳԵՍ ԲԱՐՍԱՄ, փոխգանձապետ

Ա. ՅԱՆ ԲԵՐՍԻՆ, խորհրդական
Կալիֆորնիայի համալսարանի ընդհանուր խորհրդի գրասենյակ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Համալսարանը ֆինանսական աջակցություն է ստանում Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության և գիտության նախարարությունից: Բացի այդ, նախարարությունը և կառավարությունը ֆինանսական և նյութատեխնիկական աջակցություն են ցույց տալիս նաև համալսարանի գործունեությանը: Հայաստանի կառավարությունը համալսարանին է տրամադրել վեց հարկանի մի շենք Երևանի կենտրոնում, որտեղ ներկայումս գտնվում է համալսարանը, հողամաս, ուր կկառուցվի ևս մի շենք համալսարանի համար, և մոտ 225 ակր հողատարածք Երևանի արվարձաններից մեկում՝ համալսարանի ապագա մշտական համալիրի կառուցման համար:

Համալսարանը իր գործունեության համար դրամական մեծ օգնություն է ստանում Հայ բարեգործական ընդհանուր միությունից, որը շահույթ չստացող ընկերություն է՝ հիմնադրված 1906 թ: Այն իր մասնաճյուղերն ունի ամբողջ աշխարհում: Ընկերության նպատակն է ուսումնական, մարդասիրական և մշակութային ծրագրերի միջոցով պահպանել և զարգացնել հայկական ավանդույթներն ու անհատականությունը: 1992, 1993 և 1994 ֆինանսական տարիների ընթացքում ՀԲԸՄ-ը համալսարանին է տրամադրել համապատասխանաբար 900000, 1175000 և 930000 դոլարի դրամական օգնություն: Բացի տարեկան նվիրատվություններից, ՀԲԸՄ-ը համալսարանի համար դրամական միջոցներ է հայթայթում նվիրատվությունների մշտական հիմնադրամ ստեղծելու նպատակով: Համալսարանի գործունեությանն էապես աջակցում են նաև առանձին անհատների, պետական գործակալությունների և մասնավոր հաստատությունների նվիրատվությունները:

Արմատական բարենորոգումների համար ՀԱՀ-ը խոշոր դրամական միջոցներ է ստացել Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալությունից: 1992 ֆինանսական տարում համալսարանը ստացել է 950000 դոլարի նվիրատվություն, իսկ 1993 ֆինանսական տարում՝ լրացուցիչ 1500000 դոլարի նվիրատվություն:

«Չնայած մեր կազմակերպությունը Հայաստանի համար ունի բժշկությանը և սննդին վերաբերող կարևոր ծրագրեր, սակայն մենք քաջ գիտակցում ենք, որ կրթությունը միակ հեռակա ներդրումն է, ինչը կարող ենք անել Հայաստանում և նրա քույր հանրապետություններում այնպիսի մի ժամանակ, երբ նրանք մուտք են գործում ազատ աշխարհ: Ես հույս ունեմ, որ այլ մեկենասներ և ավանդատուներ ևս կմիանան մեզ՝ օգնելու, որ ՀԱՀ-ը իրականացնի իր առաքելությունը»:

ԼՈՒԻԶ ՍԻՄՈՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Հայ բարեգործական ընդհանուր միության նախագահ

«ՀԱՀ-ը Հայաստանում Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալության զարգացման ծրագրերից ամենակարևորն է: Համալսարանը հանդիսանում է ամերիկյան կրթական համակարգի, ինչպես նաև ամերիկյան հաստատությունների, Ամերիկայի հայ համայնքի և Հայաստանի կառավարության միջև հաջող համագործակցության լավագույն օրինակ: Ես կշարունակեմ հնարավորությունների առավելագույն չափով աջակցել ՀԱՀ-ին»:

ՍՅՈՒԶԱՆ ՕԼԴԶ

Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալության կովկասյան առաքելության ղեկավար

1994–1995 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՕՐԱՑՈՒՅՑԸ

1994թ. ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՔԱՌՈՐԴ — մարտի 11 – մայիսի 25

Գրանցում	մարտի 11
Ուսուցման սկիզբ	մարտի 14
Սբ. Զատիկ **	ապրիլի 1
Եղեռնի զոհերի հիշատակի օր **	ապրիլի 24
Ուսուցման ավարտ	մայիսի 20
Ավարտական քննություններ	մայիսի 23 – մայիսի 25
Գարնանային քառորդի ավարտ	մայիսի 25

1994թ. ԱՄԱՌԱՅԻՆ ՔԱՌՈՐԴ — մայիսի 27 – օգոստոսի 10

Գրանցում	մայիսի 27
Հայաստանի անկախության օր **	մայիսի 28
Ուսուցման սկիզբ	մայիսի 30
Ամերիկայի անկախության օր **	հուլիսի 4
Ուսուցման ավարտ	օգոստոսի 5
Ավարտական քննություններ	օգոստոսի 8 – օգոստոսի 10
Ամառային քառորդի ավարտ	օգոստոսի 10

1994թ. ԱՇՆԱՆԱՅԻՆ ՔԱՌՈՐԴ — սեպտեմբերի 2 – նոյեմբերի 16

Գրանցում	սեպտեմբերի 2
Ուսուցման սկիզբ	սեպտեմբերի 5
Անկախության վերահաստատման օր ** (ՀԱՀ-ի կանոնադրության օր)	սեպտեմբերի 23
Ուսուցման ավարտ	նոյեմբերի 11
Ավարտական քննություններ	նոյեմբերի 14– նոյեմբերի 16
Աշնանային քառորդի ավարտ	նոյեմբերի 16
Գոհաբանական մաղթանքի օր **	նոյեմբերի 24

1995թ. ՁՄԵՌԱՅԻՆ ՔԱՌՈՐԴ — հունվարի 9 – մարտի 10

Ձմեռային քառորդը նախատեսվում է հատուկ ուսումնական ծրագրերի և նախապատրաստական դասընթացների համար: Պարապմունքների կանոնավոր դասացուցակ չկա:

---

* ՀԱՀ-ում ուսումնական տարին սկսվում է գարնանային քառորդով և ավարտվում հաջորդ ձմեռային քառորդով:

** Այս օրերին համալսարանը չի աշխատի:

1995–1996 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՕՐԱՑՈՒՅՑԸ

1995թ. ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՔԱՌՈՐԴ — մարտի 10 – մայիսի 24

Գրանցում	մարտի 10
Ուսուցման սկիզբ	մարտի 13
Սբ. Զատիկ **	ապրիլի 14
Եղեռնի զոհերի հիշատակի օր **	ապրիլի 24
Ուսուցման ավարտ	մայիսի 19
Ավարտական քննություններ	մայիսի 22 – մայիսի 24
Գարնանային քառորդի ավարտ	մայիսի 24

1995թ. ԱՄԱՌԱՅԻՆ ՔԱՌՈՐԴ — մայիսի 26 – օգոստոսի 9

Գրանցում	մայիսի 26
Հայաստանի անկախության օր **	մայիսի 28
Ուսուցման սկիզբ	մայիսի 29
Ամերիկայի անկախության օր **	հուլիսի 4
Ուսուցման ավարտ	օգոստոսի 4
Ավարտական քննություններ	օգոստոսի 7 – օգոստոսի 9
Ամառային քառորդի ավարտ	օգոստոսի 9

1995թ. ԱՇՆԱՆԱՅԻՆ ՔԱՌՈՐԴ — սեպտեմբերի 1 – նոյեմբերի 15

Գրանցում	սեպտեմբերի 1
Ուսուցման սկիզբ	սեպտեմբերի 4
Անկախության վերահաստատման օր ** (ՀԱՀ-ի կանոնադրության օր)	սեպտեմբերի 23
Ուսուցման ավարտ	նոյեմբերի 10
Ավարտական քննություններ	նոյեմբերի 13–նոյեմբերի 15
Աշնանային քառորդի ավարտ	նոյեմբերի 15
Գոհաբանական մաղթանքի օր **	նոյեմբերի 24

1995թ. ՁՄԵՌԱՅԻՆ ՔԱՌՈՐԴ — հունվարի 8 – մարտի 9

Ձմեռային քառորդը նախատեսվում է հատուկ ուսումնական ծրագրերի և նախապատրաստական դասընթացների համար: Պարապմունքների կանոնավոր դասացուցակ չկա:

---

* ՀԱՀ-ում ուսումնական տարին սկսվում է գարնանային քառորդով և ավարտվում հաջորդ ձմեռային քառորդով:

** Այս օրերին համալսարանը չի աշխատի:

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

1988թ. դեկտեմբերի 7-ին Ռիխտերի սանդղակով 6,9 բալ ուժգնությամբ երկրաշարժը ցնցեց Խորհրդային Հայաստանի հանրապետությունը: Երկրաշարժի հետևանքով զոհվեց 25000 և անօթևան մնաց 500000 մարդ: Մարդկային ողբերգությունը և տնտեսական ավերածությունը ցնցեցին աշխարհը, և հանրապետության դռները բացվեցին ամբողջ աշխարհից եկող մարդասիրական և տեխնիկական աննախադեպ օգնության առջև:

Երկրաշարժից հետո սեյսմիկ ճարտարագիտության արևմտյան շատ մասնագետներ այցելեցին Հայաստան և հնարավորություն ունեցան համագործակցելու հայ գործընկերների հետ: 1989 թ. այդպիսի մի հանդիպման ժամանակ էր, որ Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի ռեկտոր Յուրի Սարգսյանը առաջարկեց Բերքլիի համալսարանի քաղաքացիական ճարտարագիտության պրոֆեսոր Արմեն Տեր-Կյուրեղյանին Հայաստանում ստեղծել ամերիկյան ոգով տեխնիկական համալսարան՝ որպես Հայաստանում կրթության և ուսուցման նոր հիմքերի ստեղծման ուղի:

Գաղափարը շուտով ընդարձակվեց և դարձավ Հայաստանում ամերիկյան օրինակով մագիստրոսի կոչում շնորհող համալսարան ստեղծելու նպատակ: Այդ արտաքնապես պարզ գաղափարին հետևեցին նրա իրականացման կազմակերպչական լուրջ աշխատանքները, որոնք ղեկավարում էին երկրաշարժակայուն ճարտարագիտության երկու պրոֆեսոր՝ Միհրան Աղբաբյանը՝ Հարավային Կալիֆորնիայի համալսարանից, և Արմեն Տեր-Կյուրեղյանը՝ Բերքլիի Կալիֆորնիայի համալսարանից: Այն, ինչ սկսվել էր որպես ֆանտաստիկ երազ, շուտով դարձավ նպատակ, որին իրենց աջակցությունը ցուցաբերեցին Հայաստանի և Ամերիկայի շատ գիտնականներ: Այդ նպատակն իրագործելու համար Աղբաբյանին և Տեր-Կյուրեղյանին՝ նրանց իսկ խնդրանքով, իսկույն միացավ պրոֆեսոր Ստեփան Կարամարդյանը, որը Կալիֆորնիայի համալսարանի կառավարման բարձրագույն դպրոցի նախկին դեկանն էր: Նրանք դիմեցին Հայաստանի կառավարությանը և մի քանի կազմակերպությունների՝ խնդրելով աջակցություն Հայաստանի ամերիկյան համալսարանի ստեղծման գործում:

Գաղափարն իրականացավ Հայաստանի կառավարության և Ամերիկայի երկու խոշոր հաստատությունների՝ Հայ բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) և Կալիֆորնիայի համալսարանի վճռորոշ աջակցության շնորհիվ: Հենց սկզբից Հայաստանի կառավարությունը, մասնավորապես բարձրագույն կրթության և գիտության նախարարությունը, անընդմեջ տեխնիկական և ֆինանսական աջակցություն է ցուցաբերել համալսարանի կայացմանը: Չնայած Հայաստանում և տարածաշրջանում 1989–91թթ. տեղի ունեցող նշանակալից քաղաքական և տնտեսական փոփոխություններին, նախարարությունը աներեր կերպով օգնել է համալսարանին՝ դյուրացնելով նրա գործունեությունը և վերացնելով խոչընդոտները:

ՀԲԸՄ-ն անմիջապես համաձայնեց տրամադրել համալսարանի բացման համար անհրաժեշտ դրամական միջոցների մեծ մասը: Հենց սկզբից համալսարանի համար շահավետ է եղել նաև համագործակցությունը Կալիֆորնիայի համալսարանի հետ: Երբ Կալիֆորնիայի համալսարանի այն ժամանակվա նախագահ Դեյվիդ Փ. Գարդներին դիմեցին տեխնիկական աջակցություն ստանալու խնդրանքով, նա ստեղծեց հանձնակատար խումբ այն ժամանակվա ուսումնական գծով ավագ փոխնախագահ Ուիլյամ Ռ. Ֆրեյզերի գլխավորությամբ՝ այս ծրագրում Կալիֆորնիայի համալսարանի մասնակցության հնարավորությունը ուսումնասիրելու համար: 1990 թ. հուլիսին խումբն այցելեց Հայաստան: Մեկ տարի անց Կալիֆորնիայի համալսարանի Խնամակալների խորհուրդը միաձայն որոշեց ընկերակցել համալսարանին: Այս ընկերակցության հիման վրա Կալիֆորնիայի համալսարանը արժեքավոր տեխնիկական օգնություն է ցույց տալիս համալսարանին՝ դասախոսական կադրերի պատրաստման և ուսանողների փոխանակման ու համագործակցության ծրագրերի զարգացման հարցում:

1991 թ. սեպտեմբերի 23-ին Հայաստանը հռչակեց իր անկախությունը: Նույն օրը ՀԱՀ-ում սկսվեց ուսուցումը 101 ուսանողի համար: Անհավատալիորեն կարճ ժամանակում երազը դարձավ իրականություն:

ՀԱՀ-Ի ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանում ՀԱՀ-ի հիմնադրման նպատակը տարածաշրջանում բարձրագույն կրթության ամերիկյան համակարգին և չափանիշին համապատասխան կրթության և հետազոտական աշխատանքներ կատարելու հնարավորություն ստեղծելն էր: Համալսարանն իր դասավանդման և հետազոտական ծրագրերում ձգտում է հասնել բարձր որակի՝ հետևելով Միացյալ Նահանգների լավագույն համալսարաններին, ստեղծել այնպիսի միջավայր, որտեղ խրախուսվում են բաց քննարկումներն ու բանավեճերը:

Այժմ համալսարանն ունի մագիստրոսի կոչում շնորհող ծրագրեր հետևյալ մասնագիտությունների գծով՝ գործարարություն և կառավարում, երկրաշարժակայուն ճարտարագիտություն, արդյունաբերական ճարտարագիտություն և քաղաքագիտություն: Մագիստրոսի կոչում շնորհող ծրագրերի նպատակն է լրացնել Հայաստանի և մյուս երկրների պետական համալսարաններում և մյուս բուհերում ստացած բարձրագույն կրթությունը: ՀԱՀ-ում հիմնվել է գործարար հետազոտությունների և զարգացման կենտրոն, ինչպես նաև ճարտարագիտական հետազոտությունների կենտրոն՝ նշված բնագավառներում ուսման հետ համատեղ հետազոտություններ կատարելու համար: Ապագայում համալսարանը նպատակ ունի ավելացնել արվեստի և գիտությունների այլ բաժիններ և հետազոտական կենտրոններ:

ՀԱՀ-ի դասախոսական կազմը հրավիրվում է դասավանդման և հետազոտական աշխատանքների ղեկավարման նպատակով: Դասախոսների և ուսանողների հարաբերությունները հիմնված են մտքի ազատության վրա: Խրախուսվում է ուսանողների մտածողության ուրույն ստեղծագործ ուղին և բազմակողմանի զարգացումը: Հատուկ դասընթացների բաժինը առանձին դասընթացներ է կազմակերպում նաև հանրության համար:

Դասավանդման, հետազոտական աշխատանքի և հասարակական ծառայությունների միջոցով ՀԱՀ-ը նպատակ ունի օգնել Հայաստանին ու տարածաշրջանին և լավ օրինակ դառնալ շուկայական տնտեսությանն ու կառավարման ժողովրդավարական ձևին անցման շրջանում: Համալսարանի նպատակն է պատրաստել շրջանավարտներ, որոնք նշանակալից դեր կխաղան Հայաստանի և տարածաշրջանի սոցիալական և տնտեսական զարգացման գործում: Անգլերենով դասավանդման նպատակն է հեշտացնել ՀԱՀ-ի շրջանավարտների հաղորդակցումը ամբողջ աշխարհի իրենց գործընկերների հետ և ներգրավել արտասահմանցի դասախոսների և ուսանողների:

Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության և գիտության նախարար դոկտոր Վարդգես Գնունին, Հայ բարեգործական ընդհանուր միության նախագահ տիկին Լուիզ Սիմոն Մանուկյանը, նախագահ Միհրան Աղբաբյանը և վարչական տնօրեն Միքայել Քուշակճեանը ՀԱՀ-ի առաջին ավարտական արարողության ժամանակ: 1993 թ. հոկտեմբեր

ՈՒՍԱՆՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Եթե համալսարանի առաջին տարվա ուսանողները գլխավորապես Հայաստանից էին, ապա երկրորդ տարում համալսարան ընդունվեցին նաև ուսանողներ հարևան Վրաստանի հանրապետությունից: ՀԱՀ-ը ազգային, ռասայական, կրոնի և սեռի խտրականություն չի դնում: Այն խրախուսում է արտասահմանցի ուսանողների ուսումնառությունը համալսարանում և նպատակ ունի ստեղծելու բազմազգ ուսանողություն՝ ներառելով Կովկասի և նախկին Խորհրդային Միության այլ հանրապետությունների առաջավոր ուսանողների: Համալսարանը քաջալերում է նաև ամենատարբեր կրթությամբ դիմորդների՝ ներառյալ նրանց, ովքեր ցանկանում են հմտանալ իրենց մասնագիտության մեջ կամ փոխել մասնագիտությունը:



Լուսանկարներ ՀԱՀ-ի առօրյայից

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԱՄԱԼԻՐԸ

ՀԱՀ-ը գտնվում է Երևանի կենտրոնում՝ վեցհարկանի հարմարավետ շենքում, Մարշալ Բաղրամյան պողոտա, 40 հասցեով: Նախապես կառուցված լինելով որպես Հայաստանի երիտասարդության քաղաքական դաստիարակության կենտրոն, շենքը կատարելապես համապատասխանում է համալսարանի պահանջներին: Այն ունի դասախոսությունների դահլիճներ, լսարաններ, լաբորատորիաներ, գրադարանի հարմարություններ և գրասենյակներ: Համալսարանում կատարվել են նաև վերանորոգման կարևոր աշխատանքներ՝ շենքը դասախոսների և ուսանողների կարիքներին հարմարեցնելու համար:

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

ՀԱՀ-ն անկախ, մասնավոր, շահույթ չստացող կազմակերպություն է: Համալսարանը ստեղծվել է Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության և գիտության նախարարության և Հայաստանի ամերիկյան համալսարանի ընկերության (ՀԱՀԸ) համատեղ ջանքերով: Վերջինս Կալիֆորնիայի հասարակական բարօրության ընկերություն է, որը, հարկային օրենսգրքի 501(c) (3) հոդվածի համաձայն՝ կազմավորվել է բացառապես կրթական և բարեգործական նպատակներով: Ընկերության կենտրոնական գրասենյակը գտնվում է Կալիֆորնիայում: Համալսարանի գործունեությունը ղեկավարում է 9 անդամից բաղկացած Տնօրենների խորհուրդը, ընդ որում ՀԱՀ-ի կառավարման և ուսումնական ծրագրերի իրականացման կազմակերպչական պատասխանատվությունն ընկած է ՀԱՀԸ-ի վրա: ՀԱՀԸ-ն շահավետ աջակցություն է ստանում Կալիֆորնիայի համալսարանից, որին նա կից է:

ՀԱՀ-ի Տնօրենների խորհուրդը բաղկացած է 9 անդամից: Անդամներից չորսը նշանակվում են Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության և գիտության նախարարության, իսկ մյուս չորսը՝ ՀԱՀԸ-ի կողմից: 9-րդ անդամը ՀԱՀ-ի նախագահն է, որը պաշտոնապես հանդիսանում է խորհրդի անդամ: ՀԱՀԸ-ի Հոգաբարձուների խորհրդի նախագահը նաև ՀԱՀ-ի Տնօրենների խորհրդի նախագահն է:



Կալիֆորնիայի համալսարանի և Հայաստանի ամերիկյան համալսարանի միջև ընկերակցության համաձայնագրի ստորագրումը, 5 սեպտեմբերի, 1991թ.: Ձախից՝ աջ. առջևում՝ Կալիֆորնիայի համալսարանի նախագահ Դեյվիդ Պիերպոնտ Գարդները և ՀԱՀԸ-ի նախագահ Միհրան Ադբաբյանը, ետևում՝ Ստեփան Կարամարդյանը, Լիման Վ. Փորթը, Ուիլյամ Ռ. Ֆրեյզերը, Արմեն Տեր-Կյուրեղյանը, Քարլ Ս. Փիսքը, Թեոնի Կոնդոսը և Ա. Յան Բերսինը:

ՀԱՀԸ-ի նախագահը նաև ՀԱՀ-ի նախագահն է և համալսարանի ամբողջ գործունեության պաշտոնական ղեկավարը: Նախագահի Միացյալ Նահանգների գրասենյակը գտնվում է Օքլենդում, Կալիֆորնիայի նահանգ: Հայաստանից դուրս դա համալսարանի գլխավոր վարչական կենտրոնն է: Համալսարանի ընդունելության, դասընթացների և ուսումնական ծրագրերի, զարգացման և ֆինանսների քաղաքականությունը որոշվում է դեկանների, ծրագրերի տնօրենների, ինչպես նաև ՀԱՀԸ-ի Հոգաբարձուների խորհրդի կողմից նշանակվող տարբեր հանձնաժողովների օգնությամբ: ՀԱՀ-ի դասախոսական կազմը հիմնականում բաղկացած է Միացյալ Նահանգների խոշոր ուսումնական հաստատություններից ժամանած պրոֆեսորներից: Մի շարք հայ ուսանողներ դոկտորական աստիճան ստանալու համար այժմ պատրաստվում են Միացյալ Նահանգներում: Նրանք հետագայում մշտական դասախոսական աշխատանքի կանցնեն ՀԱՀ-ում: ՀԱՀ-ի վարչակազմը բաղկացած է Հայաստանի և Միացյալ Նահանգների քաղաքացիներից:

Բերքլիի Կալիֆորնիայի համալսարանի համալիրը

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Ներկայումս ՀԱՀ-ը կազմակերպում է ուսուցում մագիստրոսի կոչում շնորհող հետևյալ չորս ծրագրերով՝ գործարարություն և կառավարում, երկրաշարժակայուն ճարտարագիտություն, արդյունաբերական ճարտարագիտություն և քաղաքագիտություն: Ծրագրերի պահանջները և դասընթացները մանրամասնորեն ներկայացված են համապատասխան քոլեջների բաժիններում: Ուսումնական ծրագրի նախապատրաստական շրջանում ՀԱՀ-ի ուսանողներին դասավանդվում է անգլերեն լեզու և համակարգիչների գործածություն: Հաջորդ մի քանի տարիների ընթացքում ՀԱՀ-ը նպատակ ունի ընդարձակել ուսումնական ծրագրի շրջանակները՝ ներառելով մագիստրոսի կոչման շնորհումով նոր ծրագրեր հասարակական գիտությունների և առողջապահական ոլորտում:

1995 թ. գարնանը համալսարանում կբացվեն ավարտական վկայագիր շնորհող ծրագրեր՝ «Անգլերենի՝ որպես օտար լեզվի ուսուցումը» և «Հասարակական առողջապահություն»:

ԱՆԳԼԵՐԵՆԻ ԱՐԱԳԱՑՎԱԾ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Քանի որ ՀԱՀ-ում դասավանդման լեզուն անգլերենն է, համալսարանն ունի անգլերենի արագացված ուսուցման ծրագիր, որը դիմորդների համար կազմակերպում է անգլերեն լեզվի վեցամսյա ուսուցում (500 ժամ)՝ անգլերենի նրանց իմացությունը հետագա ուսումնառության համար բավարար մակարդակի հասցնելու համար: Դասընթացները ծրագրված են այնպես, որ ուսանողները սովորեն բացատրական գրավոր խոսք, հմտանան բանավոր հաղորդակցման, խմբակային քննարկումների և ընթերցանության, ինչպես նաև հատուկ տեխնիկական լեզվի մեջ, որպեսզի բավարարեն անգլալեզու համալսարանի ուսումնական պահանջները: Դիմորդներն անգլերենի արագացված ուսուցման ծրագրում ընդգրկվում են ըստ ընդունելության պահանջներում թվարկված չափանիշների:

Լսարանային ուսուցումը զուգորդվում է ժամանակակից սարքավորումներով կահավորված լեզվի լաբորատորիայում՝ գործնական աշխատանքով և գիտելիքների կիրառմամբ: Այստեղ օգտագործվում են լեզվին ու մշակույթին վերաբերող վավերական տեսաժապավեններ, որոնք նպաստում են անգլերենի իմացության զարգացմանը: Լոս Անջելեսի Կալիֆորնիայի համալսարանի Լեզվական միջոցների ծրագիրը անգլերենի հայ մասնագետների հետ միասին պատասխանատու է ծրագրի նախապատրաստման, իրականացման, գնահատման և կադրերի ապահովման համար: Դասախոսական կազմը բաղկացած է հայ որակյալ մասնագետներից և Կալիֆորնիայի Լոս Անջելեսի համալսարանից ժամանած մասնագետ դասախոսներից:

Բացի ՀԱՀ-ի ուսանողներին անգլերեն դասավանդելուց, հայ և ամերիկացի դասախոսները կազմակերպում են մեթոդոլոգիայի և լեզվաբանության գիտական դասընթացներ անգլերենի հայ դասախոսների համար, որոնցից ոմանք ընդգրկված են ՀԱՀ-ի անգլերենի արագացված ուսուցման ծրագրում:

Անգլերենի դաս

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԸ

1991 թ. իր հիմնադրման օրից սկսած՝ համալսարանը սկսել է գրադարանի ստեղծումը, որը գտնվում է համալսարանի շենքում: Ներկայումս գրադարանն ունի մոտ 10000 անուն անգլերեն գիրք, որոնք օգտագործվում են համալսարանի ուսումնական ծրագրերում: Գրադարանից օգտվում են համալսարանի դասախոսները, ուսանողները և աշխատակազմը: Բացի այդ, Միացյալ Նահանգների Միջազգային տեղեկատվության գործակալությունը գրադարանին է տրամադրում Միացյալ Նահանգներում լույս տեսնող նոր ամսագրեր և պարբերականներ:

Գրադարանը ձեռնարկել է ընդարձակման և վերանորոգման մեծ աշխատանքներ: Համալսարանը նպատակ ունի ստեղծել ամերիկյան չափանիշներին համապատասխան ժամանակակից գրադարան, ներառելով ավտոմատացված համակարգեր, CD-ROM կայաններ և, ի վերջո, միջազգային ցանցի հետ կապված գրացուցակ: Իր բացման օրից սկսած՝ համալսարանը բազմաթիվ նվիրատվություններ և մասնավոր հավաքածուներ է ստացել Միացյալ Նահանգների նվիրատուներից: Մասնավորապես, Լոս Անջելեսից ստացել է Անդրանիկ Անդրեասյանի հայերեն և անգլերեն լեզուներով 3000 հատորից բաղկացած մասնավոր հավաքածուն, ուր կան գրականությանը և հումանիտար գիտություններին նվիրված հին և հազվագյուտ գրքեր:



ՀԱՀ-ի Փափազյան գրադարանը

ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Համակարգիչների լաբորատորիան

ՀԱՀ-ում դասավանդման, հետազոտական աշխատանքների, վարչական և հաղորդակցության նպատակներով լայնորեն կիրառվում են համակարգիչներ: Համալսարանի համակարգիչները (անհատական օգտագործման համակարգիչներ, «Մակինտոշ» համակարգիչներ, Unix հիմքով գործող համակարգեր, լազերային տպիչներ, սկաներներ և CD–ROM-եր) կապված են տեղական ցանցով և գտնվում են երկու ուսումնական լաբորատորիաներում, հետազոտական կենտրոններում, դասախոսների և վարչության գրասենյակներում: Համակարգը հնարավոր է դարձնում հեռակա հաշվարկները, էլեկտրոնային ցանցի գործածությունը և տարբեր կայանների միջև տվյալների փոխանակումը: Միջազգային ցանցի հետ կապը իրականացվում է մոդեմի և Մոսկվայում տեղակայված հանգույցի միջոցով: Նախատեսվում է հաստատել ուղիղ կապ միջազգային ցանցի հետ, ապահովել Հայաստանում ցանցի լայն կիրառությունը, որը ՀԱՀ-ը կկապի Հայաստանի մյուս խոշոր ուսումնական և հետազոտական հաստատությունների հետ:

ՀԱՏՈՒԿ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԲԱԺԻՆԸ

ՀԱՀ-ի հատուկ դասընթացների բաժինը ծառայում է որպես համալսարանը արտաքին աշխարհի հետ կապող օղակ, ներառելով կառավարության, ուսումնական շրջանների որոշ հատվածներ և նոր ձևավորվող մասնավոր կազմակերպությունները: Այն կազմակերպում է ծրագրեր, որոնք ուսանողներին հնարավորություն են տալիս լավագույնս ըմբռնել տեղական և միջազգային կարևորություն ունեցող շատ հարցեր և ավելի լավ հասկանալ այն նոր ուժերը, որոնք ձևավորում են քաղաքական, տնտեսական և սոցիալական կյանքը:

Համալսարանի ղեկավարությունը հասկանում է, որ հատկապես կարևոր է հասարակական ղեկավարմանը, կառավարմանը և հասարակական գիտություններին վերաբերող դասընթացների կազմակերպումը տարածաշրջանի զարգացման այս պահին: Բաժինը կազմակերպում է կանոնավոր դասընթացներ, սեմինարներ և բաց դասախոսություններ: Դրանք բաժանված են դասընթացների կառուցվածքային շարքերի, որոնց շրջանավարտները ստանում են պաշտոնական վկայագիր: 1992 թ., ՀԱՀ-ում իր գործունեության սկզբից, հատուկ դասընթացների բաժինը կազմակերպել է դասընթացներ հետևյալ բնագավառներում. շրջակա միջավայրի պահպանում, գրադարանավարություն, բանակցություններ և որոշումներ, հաշվապահություն, բանկային համակարգ, ֆինանսական համակարգ, հարկային համակարգ, պետական լրատվության միջոցներ, միջազգային տնտեսական հարաբերություններ և հասարակական ղեկավարում:

Այս դասընթացները չեն մտնում համալսարանի մագիստրոսի կոչում շնորհող ծրագրերի մեջ և կազմակերպվում են առանց հետագայում կոչում տալու: Դասընթացներն անցկացնում են ուսումնական և մասնագիտական հաստատություններից ժամանած մասնագետները:

ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ

ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԸ ԵՎ ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԿԱՏԱՐՎՈՂ ՄՈՒԾՈՒՄՆԵՐԸ

Դիմորդները պետք է հանգամանորեն վերլուծեն ՀԱՀ-ում իրենց ուսանելու ֆինանսավորումը ընդունելության օրից մինչև ավարտելը: Քանի որ յուրաքանչյուր ուսանողի կարիքներն ու հնարավորությունները տարբեր են, ուստի համալսարանը ներկայացնում է սովորաբար կատարվող մուծումների և ծախսերի ցանկը: Ուշադրություն դարձրեք, որ մուծումների չափը ենթակա է փոփոխման առանց նախապես տեղյակ պահելու:

Գրանցման ժամանակ ուսման վարձի վճարման նպատակով ուսանողները դասակարգվում են որպես Հայաստանի Հանրապետության քաղաքացիների և ոչ քաղաքացիների՝ ըստ Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին օրենքի: Ուսման վարձի չափը, կախված դիմորդի քաղաքացիությունից, տարբեր է: Յուրաքանչյուր քառորդի համար ուսման վարձը գանձվում է հետևյալ կերպ.

Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ.....որոշվում է յուրաքանչյուր քառորդում*
Նորանկախ պետությունների քաղաքացիներ.....որոշվում է յուրաքանչյուր քառորդում*
Մնացած բոլորը.....2000 դոլար

Բացի ուսման վարձից, համալսարանը գանձում է նաև գրանցման վարձ համալսարանի հարմարություններից և ծառայություններից օգտվելու համար: Մուծումների սանդղակը յուրաքանչյուր քառորդ ներկայացնում է գրանցման գրասենյակը: Գրանցման համար կատարված մուծումները կարող են վերադարձվել, եթե ուսանողը հրաժարվում է սովորելուց և գրանցումը չեղյալ համարելու և դասերից հրաժարվելու խնդրագիր է ներկայացնում մինչև պարապմունքներն սկսվելու երկրորդ օրը: Պարապմունքները սկսվելու երկրորդ օրվանից հետո գրանցման համար կատարված մուծումները չեն վերադարձվում:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ

Համալսարանը ֆինանսական օգնություն է ցույց տալիս սահմանափակ թվով ուսանողների: Այն ուսանողները, որոնք ունեն ֆինանսական օգնության խիստ կարիք, կարող են դիմել համալսարանին՝ դրամական օգնություն ստանալու համար, որը տրվում է ընտրության սկզբունքով: Ֆինանսական օգնությունը, համալսարանի որոշման համաձայն, վարկերի ձևով տրվում է ուսանողներին, կախված նրանց ֆինանսական կարիքներից: Պարգևները, կրթաթոշակները և հետազոտական պայմանագրերը ուսանողներին տրվում են համալսարանի հայեցողությամբ՝ կախված նրանց առաջադիմությունից: Ուսանողը որևէ տեսակի ֆինանսական օգնություն չի ստանում, եթե համալսարանում աչքի չի ընկել բարձր առաջադիմությամբ: Դիմորդները հատուկ ուշադրություն պետք է դարձնեն դրամական օգնության համար դիմելու վաղ ժամկետին և պետք է շուտ լրացնեն բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը:

Կրթաթոշակը ուսանողներին տրվում է համալսարանի կրթաթոշակի հիմնադրամից, որին տարբեր չափերի մասնավոր նվիրատվություններ են արվում: Ստորև թվարկված են համալսարանի կրթաթոշակի հիմնադրամին արված նվիրատվությունները.

Դոկտոր և տիկին Միհրան Աղբաբյանների նվիրատվության հիմնադրամ
Վարդգես և Ռիտա Բալյանների նվիրատվության հիմնադրամ
Դոկտոր Վարոս Չիլինգարյանի անվան կրթաթոշակ
Դոկտոր և տիկին Արմեն Տեր-Կյուրեղյանների նվիրատվության հիմնադրամ
Ջորջ և Ֆլորա Դունայանների կրթաթոշակ
Վաղարշակ Պապոյանի անվան կրթաթոշակ
Ստեփան Փիլիպոսյանի ընկերության կրթաթոշակ
Լուիզ Սիմոն Մանուկյանի նվիրատվության հիմնադրամ
Ռիչարդ Թուֆենկյանի անվան կրթաթոշակ
Տեր և տիկին Բարրի Զորբյանների նվիրատվության հիմնադրամ

Հետագա տեղեկությունների համար դիմորդները պետք է դիմեն գրանցման գրասենյակ:

* Հայկական դրամի անկայունության պատճառով համալսարանը ուսման վարձը որոշում է յուրաքանչյուր քառորդ:

ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐՈՎ ԱՊԱՀՈՎԵԼԸ

Ներկայումս համալսարանի ուսանողներից շատերն իրենք են կարգավորում Երևանում իրենց բնակության հարցերը: Դա խրախուսվում է: Վերջին մի քանի տարիների ընթացքում քաղաքը պարբերաբար ունեցել է էլեկտրաէներգիայի, ջրի և վառելիքի խիստ պակաս, որը դժվարացրել է բնակարանային պայմանները: Բացի դրանից, Երևանում զգացվում է վարձով տրվող բնակարանների պակաս, ուստի դիմորդները պետք է ծանոթանան քաղաքում բնակվելու բոլոր հնարավորություններին և բնակարանի հարցը լուծեն դասերն սկսվելուց շատ առաջ:

Չնայած համալսարանը բոլոր ուսանողներին բնակարան չի առաջարկում, սակայն սահմանափակ թվով ուսանողների հատկացվում է վարձով բնակարան: Ուսման վարձի նման համալսարանի հատկացրած բնակարանի վարձի չափը ևս կախված է նրանից, թե ինչ քաղաքացիություն ունի ուսանողը գրանցման պահին: Բնակարանի համար դիմումի ձև և պայմանների մասին տեղեկություններ կարելի է ստանալ գրանցման գրասենյակում:

Քանի որ բնակարանները սահմանափակ են, նախապատվությունը տրվում է այն ուսանողներին, ովքեր Երևանի բնակիչ չեն: ՀԱՀ-ը չի երաշխավորում բոլոր այդպիսի ուսանողներին բնակարանով ապահովելը: Այն դիմորդները և ուսանողները, որոնք կարիք ունեն աջակցության Երևանում բնակարան գտնելու հարցում, դիմումի փաթեթը հանձնելու ժամանակ պետք է այդ մասին տեղեկացնեն ընդունելության գրասենյակում: Համալսարանը կարող է սահմանափակ աջակցություն ցույց տալ այն ուսանողներին, ովքեր ցանկանում են իրենք լուծել բնակարան գտնելու խնդիրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ



Հայաստանի Հանրապետության քարտեզը

ՀԱՀ-ն գտնվում է Հայաստանի մայրաքաղաք Երևանում, որը համարվում է աշխարհի ամենահին քաղաքներից մեկը: Այն հիմնադրվել է Ք. ա. 728 թվականին որպես էրեբունի բերդաքաղաք: Այսօր Երևանը 1,3 մլն բնակչությամբ և 300 քառ. կմ տարածքով խոշոր մայրաքաղաք է: Երևանը գտնվում է ծովի մակերևույթից 950 – 1200 մ բարձրության վրա և շրջապատված է գեղեցիկ լեռներով ու բլուրներով: Քաղաքի շատ մասերից կարելի է տեսնել Արարատ լեռը: Կլիման սովորաբար բարեխառն է: Ձմեռը կարող է դաժան լինել հատկապես լեռնային շրջաններում: Գարունը կարճատև է, ամառը տևում է 4 ամիս, իսկ աշունը մեղմ է, արևոտ ու ոսկեշող:

Եվրոպական քաղաքներից շատերի նման, Երևանը ևս կառուցված է իր գործարար կենտրոնի շուրջը: Կան բազմաթիվ հրապարակներ և բաց տարածություններ, որոնք զբոսաշրջիկներին հնարավորություն են տալիս զբոսնել զբոսայգիներում և հիանալ քաղաքի շատրվաններով ու բազմաթիվ հուշարձաններով: Գարնան, աշնան և ամռան ամիսներին հաճախ կարելի է ականատես լինել բացօթյա համերգների, ցուցահանդեսների ու ներկայացումների: Խորհրդային շրջանում քաղաքն ուներ խորհրդային չափանիշներով բարձր կենսամակարդակ: Սակայն վերջին տարիներին քաղաքը վառելիքի և էլեկտրաէներգիայի խիստ պակաս ունի:

Խորհրդային շրջանում Երևանը դարձավ արդյունաբերական և գիտական կենտրոն, որտեղ բավական զարգացած էին բարձր տեխնոլոգիաների և պաշտպանության բնագավառները: Քաղաքն ունի բազմաթիվ գիտական և ուսումնական հիմնարկներ, որտեղ աշխատում են բազմաթիվ տաղանդավոր մարդիկ: Երևանում զարգացած են նաև մշակութային կյանքն ու արվեստը՝ օպերայի, բալետի, սիմֆոնիկ երաժշտության համերգաշրջաններով և թատերաշրջաններով: Քաղաքն ունի ժամանակակից արվեստի, պատմության ու մշակույթի մոտ 20 թանգարան: Բացի այդ, Երևանում կան խոշոր հանրային գրադարաններ, որոնց թվում նաև բացառա-

Երևան, Հանրապետության հրապարակը



Բյուրականի աստղադիտարանը



Սանահինի վանքը

պես հայ մանուկների պահանջները բավարարող գրադարաններ: Դրանցից ամենահայտնին Երևանի հնագույն ձեռագրերի թանգարանն է՝ Մատենադարանը, որտեղ պահվում են 30000 հայկական նկարազարդ ձեռագրեր: Դրանցից շատերը ստեղծվել են Ք. հ. 5-րդ դարում:

Երևանից դուրս ևս գոյություն ունեն զբոսաշրջիկների համար հետաքրքրաշարժ վայրեր: Հայաստանի աշխարհագրական տարածքը կազմում է 30000 քառ. կմ: Երկրի տարածքի մեծ մասը գտնվում է ծովի մակերևույթից 1000 – 2000 մետր բարձրության վրա: Հայաստանի ամենաբարձր գագաթն Արագածն է, որն ունի 4000 մետր բարձրություն: Ք. հ. 301 թ. Հայաստանը քրիստոնեությունն ընդունեց որպես պետական կրոն: Այդ պատճառով այստեղ կան շատ եկեղեցիներ, պատմական տաճարներ և բերդեր, որոնք կառուցվել են Ք. հ. I դարում: Հայերի մեծամասնությունը պատկանում է հայ առաքելական եկեղեցուն, որը հարում է արևելյան ուղղափառ հավատին: Բնակչության մի փոքր մասն, այնուամենայնիվ, հարում է կաթոլիկ, բողոքական, ոգեկոչական, հրեական կամ մուսուլմանական հավատներին:

Հայաստանի պաշտոնական լեզուն հայերենն է, որը պատկանում է հնդեվրոպական լեզվախմբին: Լեզուն ունի սեփական այբուբենը, որը Ք. հ. 405 թ. ստեղծել է Մեսրոպ Մաշտոցը: Բնակչության մեծ մասը գիտի ռուսերեն: Անգլերենն արագորեն դառնում է կիրառվող օտար լեզու: Հայերը հայտնի են իրենց ջերմությամբ և հյուրասիրությամբ, որոնք յուրաքանչյուր հյուրի այցը դարձնում են հատուկ իրադարձություն:

Երևանի կենտրոնական շուկան

ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

«Ազատ և անկախ դարձնելու Հայաստանի ուսուցիչ երազանքը դարձել է իրականություն։ Նորանկախ այս երկրի [illegible] կախված է նրա դեկավարների երիտասարդությանն ապագայի հաստատ պատրաստելու գործունեությունից։ ՀԱՀ-ը կօգնի կառուցելու ազատ և բարեկեցիկ Հայաստան»։

ՖՈՆ ԱԼԱՅՄՆ
Ամերիկայի Միացյալ Նահանգների սենատոր



ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Դոկտոր Թեոնի Կոնդոսը Հայաստանի ամերիկյան համալսարանի ընդունելության հարցերով տնօրենն է: 1986 թվականից Կոնդոսը Կալիֆորնիայի համալսարանի ուսումնական գծով ավագ փոխնախագահի հատուկ օգնականն է:

Հայաստանի ամերիկյան համալսարանը նպատակ ունի ընդունել այնպիսի ուսանողների, որոնք ցուցաբերել են բարձր առաջադիմություն, ունեն մեծ մտավոր կարողություններ և որոնց նպատակները համապատասխանում են համալսարանի երազանքին, այն է՝ առաջնորդներ պատրաստել Հայաստանի և տարածաշրջանի համար: Ուսանողներն ընտրվում են իրենց ուսման առաջադիմության, ինչպես նաև անհատական հատկանիշների հիման վրա:

Քանի որ ՀԱՀ կարող են ընդունվել սահմանափակ թվով ուսանողներ, համալսարանը հանգամանորեն ուսումնասիրում է յուրաքանչյուր դիմորդի ուսման առաջադիմությունը և ՀԱՀ-ում ուսանելու նրանց նպատակի լրջությունը: Ուսումը շարունակելու համար ընտրելով միայն լավագույն դիմորդներին, ՀԱՀ-ը նպատակ է հետապնդում մեծապես նպաստել Հայաստանի և տարածաշրջանի համար ղեկավար կադրեր պատրաստելու գործին:

ՀԱՀ-ը ունի մագիստրոսի կոչում շնորհող ծրագրեր, որոնց նպատակն է զարգացնել քննադատական վերլուծություն կատարելու կարողություն և խորացնել գիտելիքները ընտրված բնագավառներում՝ ակտիվ դասընթացների, անհատական ուսումնասիրության և հետազոտությունների միջոցով: Դասերն անցկացնելով անգլերեն՝ ՀԱՀ-ը ձգտում է ծրագրերը հասանելի դարձնել ամբողջ տարածաշրջանի բարձր որակավորում ունեցող անձանց համար:

Թեոնի Կոնդոս

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀՈՂ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ

Ի. ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

ՀԱՀ-ի վկայական կամ մագիստրոսի կոչում շնորհող ծրագրերին դիմելու համար անհրաժեշտ է լրացնել դիմումի փաթեթում նշված բոլոր փաստաթղթերը և ըստ 28-րդ էջի ընդունելության ժամկետացանկի՝ ներկայացնել ՀԱՀ-ի ընդունելության գրասենյակ:
Ընդունելության փաթեթի մեջ մտնում են.

ա) դիմում,
բ) տեղեկանք ֆինանսական դրության մասին,
գ) դիպլոմի (դիպլոմների) օրինական պատճենը,
դ) նախորդ բոլոր դիպլոմների միջուկների պատճենները: Եթե դիպլոմի միջուկը հայերեն կամ ռուսերեն է, ապա պետք է ներկայացնել նոտարի կողմից հաստատված թարգմանությունը,
ե) երեք երաշխավորական նամակ և
զ) դիմելու վարձը, որը կազմում է ամերիկյան 5 դոլարի համարժեք դրամ ԱՊՀ երկրների քաղաքացիների համար և 45 ամերիկյան դոլար՝ ոչ ԱՊՀ երկրների քաղաքացիների համար (սույն վարձը ենթակա չէ վերադարձման):

Դիպլոմի միջուկում պետք է հստակորեն նշված լինեն դիմորդի անցած բոլոր առարկաները և դրանցից ստացած գնահատականները: Այն դիմորդները, ովքեր բուհն ավարտելու են ընթացիկ տարում և հնարավորություն չունեն սահմանված ժամկետում ներկայացնել պահանջվող փաստաթղթերը, պետք է ներկայացնեն ունեցած բոլոր դիպլոմների միջուկները, բոլոր դասընթացների ցուցակը, որ այդ պահին անցնում են, ինչպես նաև բոլոր անցած առարկաներից ստացած գնահատականների միջինը: Բոլոր դեպքերում նախորդ բուհում դիմորդի անցած առարկաների և ստացած գնահատականների լրիվ ցանկի պատճենի պաշտոնական օրինակն անհրաժեշտ է հնարավորին չափ շուտ ներկայացնել ՀԱՀ-ի ընդունելության բաժին և ոչ ուշ քան ընդունելության փաթեթը լրացնելու վերջնաժամկետը: ՀԱՀ-ի յուրաքանչյուր դիմորդ պատասխանատու է ընդունելության փաստաթղթերում բերված բոլոր տեղեկությունների ճշտության համար: Առանց անհրաժեշտ փաստաթղթերի ստուգման և հաստատման ընդունելության որոշումը վերջնական չէ: Հնարավոր է նաև, որ դիմորդից պահանջվի ընդունելության գրասենյակ ներկայացնել դիպլոմի և միջուկի բնօրինակը՝ պատճենի հետ համեմատելու նպատակով:

Եթե դիմումի փաթեթը ժամանակին չի լրացվում և ներկայացվում, ապա դիմումի քննարկումը հետաձգվում է: Այն դեպքերում, երբ սահմանված ժամկետում փաստաթղթեր ներկայացնելը կապված է որոշակի դժվարությունների հետ, դիմորդը պետք է դիմումի փաթեթի հետ մեկտեղ ներկայացնի բացատրագիր, բացատրելով բարդություններ առաջացնող հանգամանքները: Եթե ընդունելության գրասենյակը բացատրությունը հիմնավոր համարի, ապա դիմումի փաթեթի ընդունման ժամկետը կարող է երկարացվել: Նման բացառությունները հայեցողական են և կատարվում են անհատական հիմունքներով: Եթե ժամկետը պաշտոնապես երկարացված չէ, ապա բոլոր փաստաթղթերը պետք է ներկայացվեն դիմումի փաթեթի հետ միաժամանակ:

Պրոֆեսոր Մանսուր Նիազին ճարտարագիտության քոլեջի ուսանողուհու հետ

II. ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

ՀԱՀ-ի մագիստրոսի կոչում կամ վկայական շնորհող ծրագրերին դիմելու համար պետք է բավարարել ընդունելության ընդհանուր պահանջները, ինչպես նաև առանձին ծրագրերի հատուկ պահանջները:

Ա. ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

ՀԱՀ դիմելու համար դիմորդը պետք է բավարարի հետևյալ նվազագույն պահանջները.

ա) ունենա որևէ բարձրագույն ուսումնական հաստատության դիպլոմ,
բ) գնահատականների միջինը պետք է լինի 3,0 կամ ավելի բարձր՝ 4 բալանի սանդղակով, և 4,0 կամ ավելի բարձր՝ 5 բալանի սանդղակով,
գ) ունենա անգլերենի բավարար իմացություն,
դ) հանձնի տվյալ ծրագրին համապատասխան ստանդարտացված քննություն, որի մասին կխոսվի ստորև:

1. ԱՆԳԼԵՐԵՆ ԼԵԶՎԻ ԻՄԱՑՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋԸ

Քանի որ ՀԱՀ-ում դասավանդման լեզուն անգլերենն է, ՀԱՀ-ի կոչում շնորհող ծրագրերում ընդգրկվելու համար ուսանողը պետք է բավարար չափով տիրապետի թե՛ գրավոր և թե՛ բանավոր անգլերենին: Դիմորդը պետք է ցուցաբերի անգլերենով տարվող մագիստրոսի կոչում շնորհող ծրագրերի պահանջներին համապատասխան անգլերենի իմացություն: Հնարավոր է, որ դիմորդից պահանջվի մասնակցել անգլերեն լեզվով հարցազրույցի:

Դիմորդի անգլերենի իմացությունը համարվում է բավարար, եթե

ա) ՀԱՀ-ը պարզում է, որ այն հաստատությունում, որի շրջանավարտն է տվյալ դիմորդը, ուսուցման լեզուն անգլերենն է, կամ
բ) եթե դիմորդը դիմումի փաթեթի հանձնման վերջնաժամկետից ոչ ուշ, քան 2 տարի առաջ, հանձնել է «Անգլերենի, որպես օտար լեզվի, քննություն» (TOEFL) և ստացել 550 և ավելի միավոր:

TOEFL ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

TOEFL հանձնել ցանկացող դիմորդները քննության համար պետք է գրանցվեն՝ դիմելով հետևյալ հասցեով՝

TOEFL, CITO, P. O. Box 1203
6801 BE Arnhem, Netherlands
Tel: (318) 552 – 1427.

Դիմորդներն իրենց նամակում պետք է նշեն, որ քննության արդյունքներն անհրաժեշտ է ուղարկել ՀԱՀ-ի ամերիկյան գրասենյակ՝ հետևյալ հասցեով՝

American University of Armenia
300 Lakeside Drive, 22nd floor
Oakland, California 94612.
Tel: (510) 987 – 9452 Fax: (510) 208 – 3576.

Դիմորդը պետք է նախօրոք համոզվի, որ TOEFL քննության միավորների մասին տեղեկանքը ՀԱՀ-ին է հասել մինչև դիմումները ներկայացնելու վերջնաժամկետը՝ ներառյալ ապրիլի 20-ը: TOEFL քննությունից 550-ից ցածր, բայց 425-ից բարձր միավոր ստացած, ինչպես նաև ընդունելության մնացած բոլոր ընդհանուր պահանջներն ու առանձին քոլեջների հատուկ պահանջները բավարարող դիմորդների թեկնածությունը կքննարկվի մրցութային կարգով՝ անգլերենի արագացված ուսուցման ծրագրում ընդգրկվելու համար:

ԱՆԳԼԵՐԵՆԻ ԱՐԱԳԱՑՎԱԾ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Անգլերենի գիտելիքներն ընդլայնելու կարիք ունեցող դիմորդների համար ՀԱՀ-ը առաջարկում է անգլերենի արագացված ուսուցման ծրագիր (ԱԱՈՒԾ): Այս ծրագրի նպատակն է օգնել ուսանողներին զարգացնելու անգլերենի իրենց իմացությունը՝ համապատասխան այն ծրագրի պահանջներին, որին նրանք դիմել են:

Անգլերենի քննությունը բավարար ձևով հանձնած և ընդունելության մնացած ընդհանուր պահանջները, ինչպես նաև առանձին քոլեջների հատուկ պահանջները բավարարող դիմորդների թեկնածությունը կքննարկվի մրցութային կարգով՝ անգլերենի արագացված ուսուցման ծրագրին մասնակցելու համար: ԱԱՈՒԾ-ին մասնակցելու թույլտվություն ստանալը չի երաշխավորում ՀԱՀ-ի կոչում կամ վկայական շնորհող որևէ ծրագրում ընդունվելը:

2. ՍՏԱՆԴԱՐՏԱՑՎԱԾ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Մագիստրոսի կոչում շնորհող ծրագրերի յուրաքանչյուր դիմորդ պետք է հանձնի համապատասխան ստանդարտացված քննություն: Գործարար ղեկավարման մագիստրոսի (ԳՂՄ) կոչում շնորհող ծրագրի դիմորդները պետք է հանձնեն «Ղեկավարման ընդունակությունների քննություն» (GMAT): Արդյունաբերական ճարտարագիտության, երկրաշարժակայուն ճարտարագիտության և քաղաքագիտության մագիստրոսի կոչում շնորհող ծրագրերի դիմորդները պետք է հանձնեն «Ընդհանուր գրանցման քննություն» (GRE): Վկայական շնորհող «Հասարակական առողջապահություն» ծրագրի դիմորդները նույնպես պետք է հանձնեն GRE:

Երկու քննություններն էլ անց են կացվում ՀԱՀ-ում: Այն դիմորդները, որոնց տվյալները բավարարում են ընդունելության ընդհանուր պահանջներին, ինչպես նաև առանձին քոլեջների հատուկ պահանջներին, ներառյալ անգլերենի բավարար իմացությունը, կարող են գրանցվել ՀԱՀ-ում՝ GMAT կամ GRE հանձնելու համար: GMAT կամ GRE կարելի է հանձնել նաև այլ տեղում: ՀԱՀ-ի կոդը GMAT-ի համար 0284 է, GRE-ի համար՝ 0676: Ընդունելության ժամանակ հաշվի կառնվեն միայն այն քննության արդյունքները, որը դիմորդը հանձնել է տվյալ ընդունելության վերջնաժամկետից ոչ ուշ, քան 2 տարի առաջ: Բոլոր դեպքերում դիմորդները պետք է դիմեն այն հաստատությանը, որտեղ հանձնել են քննությունը՝ խնդրելով իրենց քննության արդյունքներն ուղղակի ուղարկել Կալիֆորնիա, Օքլենդ՝ համալսարանի ԱՄՆ-ի գրասենյակ: Այն դիմորդները, որոնք պետք է GMAT կամ GRE հանձնեն ՀԱՀ-ում, քննական ծառայության սահմանած ժամկետում պետք է գրանցվեն ՀԱՀ-ում: Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել ընդունելության գրասենյակ:



Դոկտոր Միքայել Քուշակճեան, վարչական տնօրեն

Բ. ԱՌԱՆՁԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՏՈՒԿ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Տես սույն տեղեկատուի համապատասխան բաժինը:

III. ՈՒՂՂԱԿԻ ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀՈՂ ԾՐԱԳՐԵՐԻՆ ԴԻՄԵԼԸ

Եթե դիմորդի տվյալները բավարարում են ընդունելության ընդհանուր պահանջները, ինչպես նաև ծրագրերի կողմից առաջադրվող հատուկ պահանջները, ունի ընդունելության կարգի մեջ նշված պահանջներով անգլերենի բավարար իմացություն և հանձնել է համապատասխան ստանդարտացված ավարտական քննություն, ապա նա կարող է ուղղակի դիմել ՀԱՀ-ի մագիստրոսի կոչում շնորհող ծրագրերին: Գարնանային ընդունելությանը մասնակցելու համար դիմորդը պետք է մինչև ընդունելության վերջնաժամկետը հանձնի դիմումի փաթեթը, ինչպես նաև փաստաթուղթ առ այն, որ պահանջվող բոլոր քննությունների արդյունքներն ուղարկվել են ուղղակի ՀԱՀ-ի ամերիկյան գրասենյակ, և որ դրանք ստացվել են մինչև ընդունելության վերջնաժամկետը: Ընդունող հանձնաժողովը դիմորդի թեկնածությունը կքննարկի միայն պահանջվող բոլոր փաստաթղթերը ժամանակին ստանալու դեպքում: Դիմումի փաթեթը և անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը ժամանակին ու պատշաճ ձևով լրացված և ներկայացված չլինելու դեպքում դիմումի քննարկումը հետաձգվում է:

Ի գիտություն բոլոր դիմորդների: Ընդունելության մասին բոլոր որոշումներն ընդունում է ընդունող հանձնաժողովը: Չնայած այն հանգամանքին, որ ոչ մի գործոն

առանձին վերցրած որոշիչ չէ, ընդունող հանձնաժողովը հաշվի է առնում դիմորդի ներկայացրած բոլոր տեղեկությունները: Նվազագույն պահանջներին բավարարելը չի երաշխավորում ՀԱՀ-ի որևէ ծրագրում դիմորդի ընդունվելը: Ընդունելությունը կատարվում է մրցութային կարգով, հաշվի առնելով դիմորդի ընդհանուր մասնագիտացումը, ինչպես նաև նրան իր ընտրած ծրագրում ընդգրկելու համալսարանի հնարավորությունը;

IV. ՀԱՏՈՒԿ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

Բացառիկ դեպքերում ընդունող հանձնաժողովը կարող է իր հայեցողությամբ ընդունել դիմորդի, որը չի բավարարել ընդունելության նվազագույն պահանջները և որը, սակայն, ցուցաբերել է ՀԱՀ-ի ակադեմիական ծրագիրը հաջողությամբ անցնելու ունակություն: Այսպես ընդունված ուսանողներն ունեն փորձնական կարգավիճակ և պետք է բավարարեն իրենց ընդունվելու մասին տեղեկացնող նամակում նշված հատուկ պահանջները: Փորձնական ընդունելության պահանջները չբավարարող ուսանողները ենթակա են հեռացման:

V. ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

Համալսարան չընդունված դիմորդներն իրավունք ունեն մեկ անգամ գրավոր բողոք ներկայացնել ընդունող հանձնաժողովին: Չընդունվելու որոշումն իմանալուց հետո 15 օրվա ընթացքում դիմորդը պետք է գրավոր բողոք ներկայացնի ընդունող հանձնաժողովին, նշելով բողոքարկմանը վերաբերող բոլոր պատճառները, խնդրին առնչվող լրացուցիչ փաստերը և իր գնահատականներին ու ընդունելությանը վերաբերող այլ տեղեկություններ: Դրանից հետո ընդունող հանձնաժողովը, իր հայեցողությամբ, կարող է վերանայել իր որոշումը:

VI. ԸՆԴՈՒՆՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄԸ ԵՎ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ԴԻՄԵԼՈՒ ԺԱՄԿԵՏԱՑԱՆԿԸ

Ընդունվելու մասին ծանուցումը արվում է համալսարանի ընդունելության գրասենյակի կողմից: Միայն ընդունելության հարցերով տնօրենի ստորագրությամբ նամակն է, որ պաշտոնապես հավաստում է համալսարանի՝ մագիստրոսի կոչում շնորհող որևէ ծրագրում կամ անգլերենի արագացված ուսուցման ծրագրում դիմորդի ընդունվելը: Ընդունելությանը մասնակցելու համար յուրաքանչյուր դիմորդ պետք է վստահ լինի, որ ՀԱՀ-ը անհրաժեշտ դիմումը, փաստաթղթերը և տեղեկությունները ստացել է սահմանված ժամկետում: Եթե ընդունելության կարգում այլ բան չի ասված, ապա բոլոր փաստաթղթերը պետք է ներկայացվեն համալսարանի ընդունելության գրասենյակ, հետևյալ հասցեով՝ 375019, Հայաստանի Հանրապետություն, Երևան, Մարշալ Բաղրամյան պող., 40:

Դիմումները ներկայացնելու ժամկետացանկը*

Դիմումի փաթեթ ներկայացնելը	ապրիլի 10
GRE/ GMAT-ի կամ TOEFL-ի արդյունքները նրանց համար, ովքեր ԱԱՈՒԾ-ի դիմորդներ չեն	ապրիլի 20
TOEFL-ի միավորները ՀԱՀ ներկայացնելը նրանց համար, ովքեր ԱԱՈՒԾ-ի դիմորդներ չեն	ապրիլի 20
Անգլերենի իմացության գնահատման առաջին քննությունը	ապրիլի 20
ԱԱՈՒԾ-ում ընդունվելու մասին ծանուցումը	մայիսի երրորդ շաբաթ
Դիմորդների ընթացիկ տարվա ուսման առաջադիմությունը ներկայացնելը	օգոստոսի 1
Անգլերենի արագացված ծրագրի դասերը	ամառային և աշնանային քառորդներ
Գրանցումը GRE և GMAT քննությունների համար	հոկտեմբերի 1
GRE քննությունը**	դեկտեմբեր
GMAT քննությունը**	հունվար
Կոչում շնորհող ծրագրերում ընդունվելու մասին որոշման ծանուցումը	փետրվարի վերջին շաբաթ

* Հնարավոր է սույն ժամկետացանկի որոշ փոփոխություն: Ստուգեք ընդունելության գրասենյակի կողմից կատարված կամ դիմումի փաթեթում տեղի ունեցած բոլոր փոփոխությունները: Եթե նշված օրերից որևէ մեկը համընկնում է պաշտոնապես ընդունված տոնի հետ, որի ժամանակ համալսարանը փակ է, ապա սահմանված վերջնաժամկետը տեղափոխվում հաջորդ աշխատանքային օր:

** Համալսարանում GRE և GMAT քննությունների անցկացման ճշգրիտ օրերը կհայտնվեն լրացուցիչ:

ԳՐԱՆՑՈՒՄԸ ԵՎ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԸ

I. ԳՐԱՆՑՈՒՄԸ

Ուսանողները պետք է ամեն քառորդ գրանցվեն գրանցման բաժնում, մինչև համապատասխան կոչում կամ վկայական ստանալու համար անհրաժեշտ բոլոր պահանջները կատարելը: Եթե պահանջվող վարձը ժամանակին չի մուծվում, գրանցման բաժինը ուսանողին չի գրանցում: Այն ուսանողները, որոնք ստանում են ֆինանսական օժանդակություն, պետք է գրանցման բաժնում ստուգեն և համոզվեն, որ վճարումները կատարվում են ժամանակին և կանոնավոր: Եթե գրանցման վարձը չի մուծվում գրանցման բաժնի սահմանած ժամկետում, ուսանողին չի թույլատրվում մասնակցել պարապմունքներին: Գրանցված ուսանողը կարող է չեղյալ համարել իր գրանցումը և ետ ստանալ մուծած գրանցման վարձը, եթե մինչև պարապմունքներն սկսվելու երկրորդ օրը ներկայացնում է գրանցումը չեղյալ համարելու և դասերից ազատվելու խնդրագիր: Այն ուսանողները, որոնք ազատված համարվելու համար դիմում են դասերը սկսվելու երկրորդ օրից հետո, գրանցման վարձը ետ չեն ստանում:

II. ԴԱՍԵՐԻՑ ԱԶԱՏՎԵԼԸ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՎԵԼԸ

ՀԱՀ-ում սովորելու ընթացքում ուսանողը կարող է դասերից ազատվելու խնդրագիր ներկայացնել միայն մեկ անգամ: Ուսանողը կարող է թողնել համալսարանը ցանկացած ժամանակ կամ դիմել կարճաժամկետ տարկետում ձևակերպելու համար միայն քառորդների միջև ընկած ժամանակահատվածում կամ քառորդի առաջին երկու շաբաթների ընթացքում: Ուսանողները, որոնք դիմում են վերականգնվելու համար, պետք է պլանավորեն վերադառնալ այդ տարվա համարժեք ակադեմիական քառորդի ընթացքում: Եթե ուսանողը ազատվել է դասերից և ցանկանում է վերականգնվել, պետք է ներկայացնի վերականգնվելու դիմում: Որևէ քառորդում պարապմունքներից ազատվելու կամ վերականգնվելու դիմումները պետք է ներկայացնել համապատասխան քոլեջի դեկանին, դեկանի պաշտոնակատարին կամ ծրագրի համակարգողին՝ տվյալ քառորդը սկսվելուց առնվազն 3 շաբաթ առաջ: Ազատվելու մասին պաշտոնական թույլտվություն չունենալու դեպքում ուսանողը համարվում է ծրագրից դուրս մնացած և կարող է չվերականգնվել: Դասերից ազատվելու համար պաշտոնական թույլտվություն ունեցող ուսանողի վերականգնումը չի արվում ավտոմատ կերպով: Այն կատարվում է հաշվի առնելով մինչև դասերից ազատվելը ուսանողի ցուցաբերած առաջադիմությունը, ինչպես նաև տվյալ քառորդում դասընթացների և ազատ



Դոկտոր Մայքլ Քոնրադ, Ուսանողական ծառայությունների և գրանցման բաժնի տնօրեն

տեղերի առկայությունը: Վերականգնման ենթակա լինելու համար ուսանողը պետք է պարապմունքների վերադառնա երեք քառորդի ընթացքում:

Եթե ուսանողը համալսարանից հեռացվել է անբավարար առաջադիմության պատճառով, ապա նա ՀԱՀ-ի որևէ ծրագրում վերականգնվել չի կարող:

III. ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԸ ԵՎ ԾԱՆՐԱԲԵՌՆՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Մագիստրոսի կոչում շնորհող դասընթացներին վերագրվում է միավորային արժեք: Մագիստրոսի կոչում շնորհող միավոր դասընթացը սովորաբար իրենից ներկայացնում է շաբաթական չորս ժամ աշխատանք՝ ներառյալ պարապմունքներին հաճախելը, պատրաստվելը, լաբորատոր կամ հետազոտական աշխատանքները: Ուսումնառության յուրաքանչյուր քառորդում ուսանողները պետք է ունենան ծրագրային լրիվ ծանրաբեռնվածություն: Մագիստրոսի կոչում շնորհող յուրաքանչյուր դասընթաց ընդհանուր առմամբ բաղկացած է 4 միավորից: Գրանցված ուսանողները յուրաքանչյուր քառորդում պետք է ունենան առնվազն 12, բայց ոչ ավելի, քան 20 միավոր դասընթաց: 16 միավորից բարձր ծանրաբեռնվածություն ունենալու համար անհրաժեշտ է նախապես համաձայնություն ստանալ դեկանից, դեկանի պաշտոնակատարից կամ ծրագիրը համակարգողից:

IV. ՏԵՂԱՓՈԽՄԱՆ ԿՐԵԴԻՏԸ

Հազվադեպ դեպքերում ՀԱՀ-ը կարող է ընդունել ամերիկյան համակարգ ունեցող որևէ հաստատությունից

ստացված մեկ (1) առարկայի տեղափոխման կրեդիտ: Տեղափոխման կրեդիտը ՀԱՀ-ի կողմից կարող է ընդունվել հետևյալ պայմանների դեպքում.

ա) ուսանողը պետք է ավարտած լինի այն հաստատությունը, որից տրվում է տեղափոխման կրեդիտը,

բ) տեղափոխման կրեդիտը պետք է վաստակված լինի կոչում շնորհող կամ դրան համարժեք որևէ կուրսում,

գ) ուսանողը պետք է տեղեկանք ներկայացնի այն հաստատությունից, որտեղից ստացվել է կրեդիտը՝ առ այն, որ տեղափոխման համար ներկայացված կրեդիտը տվյալ հաստատությունում ուսանողի կողմից չի օգտագործվել ծրագրային կամ աստիճան ստանալու որևէ պահանջ լրացնելու նպատակով,

դ) ուսանողը պետք է պաշտոնական նկարագրություն ներկայացնի այն կուրսի համալսարանական տեղեկատուից, որի համար կատարվում է կրեդիտի տեղափոխումը, ինչպես նաև պետք է ներկայացնի գնահատականներին և կրեդիտային ժամերին վերաբերող պաշտոնական պատճենը,

ե) ուսանողը պետք է կրեդիտի տեղափոխման պատճառները բացատրող խնդրագրին կցի բոլոր նշված փաստաթղթերը և ներկայացնի քոլեջի կամ դպրոցի դեկանին և ստանա վերջինիս համաձայնությունը:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

I. ՔԱՌՈՐԴԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՀԱՀ-ում մագիստրոսի կոչում շնորհող ծրագրերն անցկացվում են երեք ակադեմիական քառորդով՝ գարնանային, ամառային և աշնանային: Հնարավոր է, որ ոչ ստուգարքային դասընթացները և անհատական ուսումնասիրություններն անցկացվեն ձմեռային քառորդի ընթացքում:

II. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՀԱՀ-ում մագիստրոսի կոչում շնորհող ծրագրերի ուսանողների աշխատանքը գնահատվում է տառերով՝ A (գերազանց), B (լավ), C (բավարար), D (անբավարար), I (թերի), F (կտրված), P (աշխատանքը թերի է համալսարանի մեղքով, անկախ ուսանողից, բայց որակը բավարար է): Անհատական ուսումնասիրության և սեմինարների համար ուսանողները գնահատվում են հետևյալ կերպ՝ S (բավարար) և U (անբավարար): A, B և C գնահատականներին կարող են կցվել (+) կամ (–) նշանները, որոնք բարձրացնում կամ իջեցնում են գնահատականը:

Տառերին համապատասխանում են հետևյալ թվանշանները՝ A=4, B=3, C=2, D=1, F=0: A, B կամ C գնահատականներին կից (+) և (–) նշանները տառի թվային արժեքը համապատասխանաբար բարձրացնում և իջեցնում են երեք տասնորդական միավորով: Սա չի վերաբերում A+ գնահատականին, որի թվային արժեքը 4,0 է: Ուսանողի գնահատականների միջինը հաշվվում է չորս բալանի սանդղակով , ՀԱՀ-ում անցած դասընթացների հիման վրա: Գնահատականների միջինը որոշելու համար օգտագործվում են A, B, C, D, F գնահատականները: P գնահատական նշանակվում է այն դեպքում, երբ համալսարանը ձեռնարկել է բոլոր անհրաժեշտ միջոցները, որպեսզի ուսանողը պահանջվող ձևով անցնի դասընթացը: Չնայած P, S և U գնահատականները թվային արժեք չունեն և միջին գնահատականը հաշվելիս հաշվի չեն առնվում, այդուհանդերձ, ուսանողը ստուգարքն ստանում է: I գնահատականը նույնպես թվային արժեք չունի. ուսանողը ստուգարք չի ստանում, քանի դեռ այլ գնահատական ստանալու համար անհրաժեշտ աշխատանքն ու հանձնարարությունը ամբողջությամբ չի կատարել: ՀԱՀ-ի մագիստրոսի կոչում շնորհող ծրագրերում ընդգրկված ուսանողները համալսարանում անցած դասընթացների համար պետք է ապահովեն առնվազն 3,0 միջին գնահատական:

III. ԴԱՍԸՆԹԱՑԻ ՎԵՐԱՀԱՆՁՆՈՒՄԸ

Եթե մագիստրոսի կոչում շնորհող ծրագրերում ընդգրկված ուսանողը որևէ առարկայից ստացել է D կամ F գնահաատական, ապա նա պետք է վերահանձնի այդ առարկան: Ստուգարք նշանակվում է մեկ անգամ, իսկ ուսանողի միջին գնահատականը որոշելիս հաշվի է առնվում միայն վերջին գնահատականը: Եթե ուսանողը որևէ առարկայից ստացել է C+, C կամ C–, ցանկության դեպքում կարող է վերահանձնել այն: Այս դեպքում ևս ստուգարքը և միջին գնահատականը որոշվում են վերոնշյալ ձևով: Որևէ առարկայից I ստացած ուսանողը գնահատականը ստանալուց հետո մեկ տարվա ընթացքում պետք է կատարի այդ դասընթացի պահանջները կամ վերահանձնի այն:

IV. ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆԸ, ՓՈՐՁՆԱԿԱՆ ՇՐՋԱՆԸ ԵՎ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՑ ՀԵՌԱՑՎԵԼԸ

Ուսման առաջադիմությունը: Ըստ ուսման առաջադիմության ՀԱՀ-ի ուսանողները դասակարգվում են որպես՝ 1) բարձր առաջադիմություն ունեցողներ, 2) փորձնական շրջանի կարգավիճակ ունեցողներ և 3) հեռացման ենթակա ուսանողներ: Ուսանողը համարվում է բարձր առաջադիմություն ունեցող, եթե 1) ունենում է համապատասխան առաջընթաց՝ կոչում ստանալու համար անհրաժեշտ պահանջները կատարելիս, 2) գնահատականների միջինը կազմում է նվազագույնը 3,0:

Փորձնական շրջանը և հեռացվելը: Բարձր առաջադիմություն չունեցող ուսանողները համարվում են փորձաշրջանի կարգավիճակ ունեցող կամ հեռացման ենթակա: Բացի վերոհիշյալ դեպքերից ուսանողը կարող է համարվել փորձնական շրջանում, եթե չի բավարարում տվյալ բաժնի պահանջները կամ սպասելիքները: Փորձնական շրջանի նպատակն է բավարարից ցածր առաջադիմություն ունեցող ուսանողին հնարավորություն տալ այդ շրջանում ուղղելու թերությունները և բարձրացնելու առաջադիմությունը՝ համալսարանի նվազագույն պահանջներին համապատասխան:

Ուսանողը համարվում է փորձնական շրջանի կարգավիճակում և ի վերջո հեռացվում է համալսարանից, եթե բավարար առաջընթաց չի ցուցաբերում: Յուրաքանչյուր քառորդի վերջում գրանցումների բաժինն ամփոփում է գրանցված ուսանողների առաջադիմության արդյունքները: Ուսման մեջ թերացած, այսինքն՝ 3,0-ից ցածր միջին գնահատական ունեցող կամ բավարար առաջընթաց չունեցող ուսանողների մասին տեղյակ է պահվում համապատասխան քոլեջի դեկանին, դեկանի պաշտանակատարին կամ ծրագիրը համակարգողին, որոնք այդ ուսանողներին տեղեկացնում են, որ նրանք փորձնական շրջանում են, ենթակա են հեռացման կամ հեռացվել են: Համալսարանից հեռացված ուսանողն այլևս չի վերականգնվում:

Փորձնական շրջանում գտնվելու մասին տեղեկացնող նամակում նշվում է, թե որն է թերացումը և ինչ է պետք անել այն ուղղելու համար, նշվում է նաև թույլատրելի ժամկետը, որի ընթացքում պետք է ուղղել թերությունը կամ ցուցաբերել բավարար առաջընթաց, ինչպես նաև այն մոտավոր ժամկետը, երբ տվյալ ուսանողի արդյունքները կրկին կամփոփվեն:

Եթե ուսանողն իրար հաջորդող երկու քառորդների ընթացքում մնում է փորձնական շրջանում, նա դառնում է հեռացման ենթակա: Եթե ուսանողը չի բավարարում քննության կամ չի կատարում նշված մյուս պահանջները, նա կարող է հեռացվել առանց նախազգուշական նամակի: Ուսանողը ենթակա է հեռացման, եթե թույլատրելի փորձնական շրջանի ընթացքում չի վերացնում թերությունները: Ուսանողը դուրս է գալիս փորձնական շրջանից, եթե իր գնահատականների միջինը բարձրացնում է առնվազն մինչև 3,0:

Ուսանողն իրավունք ունի բողոքարկել ակադեմիական կամ վարչական որոշումները, որոնք ազդում են կոչում ստանալու վրա կամ կասեցնում այն: Ընդհանուր առմամբ բողոքը պետք է ներկայացնել վարչական այն մակարդակում, որում կայացվել է տվյալ որոշումը: Միայն տվյալ մակարդակում լսվելուց հետո բողոքը կարող է փոխանցվել ավելի բարձր ակադեմիական կամ վարչական մակարդակ: Համալսարանից հեռացվելու դեպքում ուսանողը կարող է բողոք ներկայացնել ուսումնական հարցերով հանձնաժողովին, որի կազմում ընդգրկված են բոլոր դեկանները, դեկանների պաշտոնակատարները և ծրագրերը համակարգողները:

V. ԿՈՉՈՒՄՆԵՐԸ

Ներկայումս ՀԱՀ-ը շնորհում է հետևյալ կոչումները. Ճարտարագիտության մագիստրոս՝ երկրաշարժակայուն ճարտարագիտության և արդյունաբերական ճարտարագիտության բաժիններում, գործարար ղեկավարման մագիստրոս՝ գործարարության և կառավարման բաժնում, արվեստի մագիստրոս՝ քաղաքագիտության բաժնում:

Ավարտելու պահանջները: Կոչում շնորհելու հարցում քոլեջներն ու դպրոցները սահմանում են իրենց ուրույն պահանջները: Այդ պահանջները մանրամասն նկարագրված են սույն տեղեկատուի «Ընդունելության պահանջները» բաժնում: Կատարված ցանկացած փոփոխության մասին հայտարարություն կարվի տվյալ քոլեջի կողմից: Բոլոր ուսումնական ծրագրերը պետք է հաստատվեն համապատասխան քոլեջի կամ դպրոցի դեկանի և կամ դեկանի պաշտոնակատարի կողմից: Ավարտելու համար ուսանողը պարտավոր է կատարել համապատասխան ծրագրի բոլոր նշված պահանջները, իսկ նրա գնահատականների միջինը պետք է լինի առնվազն 3,0: Կոչումները շնորհվում են տարեկան մեկ անգամ: Կոչում կամ վկայական ստանալու բոլոր թեկնածուները պետք է հաջողությամբ լրացնեն Շրջակա միջավայրի պահպանություն և կառավարում 295 կուրսը: Այս կուրսի համար ստացված միավորները չեն ավելացնի կոչում կամ վկայական ստանալու համար անհրաժեշտ միավորների քանակը:

Կոչում ստանալու համար անհրաժեշտ պահանջների կատարումը: Մագիստրոսի կոչում շնորհող ծրագրերի ուսանողները երեք տարվա ընթացքում պետք է բավարարեն կոչման համար անհրաժեշտ նշված բոլոր պահանջները: Եթե այդ ընթացքում ուսանողը չի ավարտում դասընթացը, նրա թեկնածությունը ինքնաբերաբար դուրս է գալիս: Որոշակի ժամկետից հետո համապատասխան քոլեջն ընդհանրապես հանում է մագիստրոսի կոչում ստանալու տվյալ ուսանողի թեկնածությունը:

VI. ՎԿԱՅԱԿԱՆ ՇՆՈՐՀՈՂ ԾՐԱԳՐԵՐ

1995 թվականի գարնանային քառորդից սկսած ՀԱՀ-ը կառաջարկի վկայական շնորհող ուսումնական ծրագրեր՝ «Առողջապահություն» և «Անգլերենի՝ որպես օտար լեզվի ուսուցումը»: Վկայական շնորհող ծրագրերի տևողությունը երեք ուսումնական քառորդ է: Վերը նշված ուսումնառության կարգը կկիրառվի նաև վկայական շնորհող ծրագրերում ընդգրկված ուսանողների նկատմամբ: Յուրաքանչյուր ծրագրի հատուկ պահանջների, ինչպես նաև վկայական ստանալու համար անհրաժեշտ պահանջների մասին հետագա մանրամասն տեղեկություններ կտրվեն 1995 թվականի սկզբին:

ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԸ, ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ



ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԾՐԱԳԻՐԸ

Դոկտոր Ստեփան Կարամարդյանը ՀԱՀ-ի գործարարության և կառավարման քոլեջի դեկանն է*, ինչպես նաև ՀԱՀ-ի գործարար հետազոտությունների և զարգացման կենտրոնի տնօրենը: Բերքլիի Կալիֆորնիայի համալսարանի վաստակավոր պրոֆեսոր, նախկինում Կալիֆորնիայի Ռիվրսայդի կառավարման դպրոցի պրոֆեսոր և դեկան, Ֆուլբրայթի թոշակառու Կարամարդյանը եղել է շատ ընկերությունների և գործակալությունների, այդ թվում նաև ԱՄՆ-ի պետական դեպարտամենտի և «Ռանդ» ընկերության խորհրդատու:

Գործարարության և կառավարման քոլեջն առաջարկում է կոչում շնորհող երկամյա լրիվ ծանրաբեռնվածությամբ ծրագիր, որն ավարտելուց հետո շնորհվում է գործարար ղեկավարման մագիստրոսի կոչում: Գործարար ղեկավարման մագիստրոսի կոչումը ընդհանուր մի կոչում է, որի նպատակն է պատրաստել ապագա ձեռնարկատերեր, մասնավոր ձեռնարկությունների ղեկավարներ և պետական պաշտոնյաներ: Ակնկալվում է, որ քոլեջի շրջանավարտները կգրավեն ղեկավար պաշտոններ և առանցքային դեր կունենան Հայաստանի և ողջ տարածաշրջանի մասնավոր գործարարության ու տնտեսական զարգացման բնագավառում, ինչպես նաև միջազգային տնտեսական հարաբերություններում:

Տեխնոլոգիաների և հաստատությունների հիմնավոր վերափոխումներով, հաղորդակցության միջոցների նորացմամբ, շուկայի համաշխարհայնացման և հրամայական տնտեսավարումից ազատ շուկայական տնտեսությանն անցման գործընթացներով նշանավորվող ներկա ժամանակաշրջանում նոր պահանջներին և նոր իրականությանը հարմարվելը արդյունավետ և նորովի ղեկավարելու էական պայման է: Տարածաշրջանում մասնավոր և հասարակական սեկտորների ապագա ղեկավարները կազմակերպություններին և մարդկանց ղեկավարելու համար ոչ միայն պետք է լինեն իրազեկ և ունենան գիտելիքներ, այլ նաև պետք է հանդիսանան փոփոխություններն իրականացնողներ:

Ունենալով խիստ միջազգային կողմնորոշում, գործարար ղեկավարման մագիստրոսի կոչում շնորհող ծրագրի նպատակն է օգնել ապագա գործարար ղեկավարներին՝ ազատ և արդյունավետ գործելու համընդհանուր մրցակցային միջավայրում: Ուսումնական ծրագիրը հաշվի է առնում նաև տարածաշրջանի յուրահատուկ տնտեսական, սոցիալական և մշակութային պահանջներն ու պայմանները:

Ստեփան Կարամարդյան

---

* Հանգուցյալ դր. Ս. Կարամարդյանին ներկայումս փոխարինում է դր. Հարոլդ Քասարջյանը: Դր. Քասարջյանը Լոս Անջելեսի Կալիֆորնիայի համալսարանի վաստակավոր պրոֆեսոր է, դասընթացներ է վարել սպառողի հոգեբանություն, ներածական շուկայագիտություն, շուկայագիտության հետազոտություն, հետազոտման մեթոդոլոգիա, զանգվածային հաղորդակցություն, վիճակագրություն և շուկայագիտության իրավունք առարկաներից: 1967-1994թթ. որպես հրավիրված պրոֆեսոր դասախոսել է ԱՄՆ-ի մի շարք բուհերում, Դանիայում, Պորտուգալիայում: 1994 թվից դր. Քասարջյանը ՀԱՀ-ի գործարարության և կառավարման քոլեջի դեկանն է: Նրա խոսքը կներկայացվի տեղեկատուի հաջորդ հրատարակության մեջ:

ՔՈԼԵՋԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Բացի համալսարանի ընդունելության ընդհանուր պահանջները բավարարելը, որոնք շարադրված են սույն տեղեկատուի «Ընդունելությունը» բաժնում՝ 25-րդ էջից սկսած, գործարարության և կառավարման քոլեջի դիմորդները պետք է առնվազն մեկ տարի ուսումնասիրած լինեն բարձրագույն մաթեմատիկա՝ ներառյալ գծային հանրահաշիվ և դիֆերենցիալ ու ինտեգրալ հաշիվ:

ՔՈԼԵՋՆ ԱՎԱՐՏԵԼՈՒ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

ԳՂՄ կոչումով ավարտելու համար ուսանողները պետք է հաջողությամբ լրացնեն 88 քառորդային միավոր (21 դասընթաց) և ունենան 3,0 կամ ավելի բարձր գնահատականների միջին: Ծրագրում ընդգրկված ուսանողից պահանջվում է լրիվ ծանրաբեռնվածությամբ առնվազն երկու ուսումնական տարվա հաճախում:

ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Գործարարության ղեկավարման մագիստրոսի կոչում շնորհող դասընթացները բաժանված են երեք խմբի՝ 10 պարտադիր հիմնական դասընթացներ, 9 ընտրովի դասընթացներ, որոնք ուսանողն ընտրում է քոլեջի առաջարկած ընտրովի դասընթացների ցուցակից, և գործարարության նախագիծ, որը տևում է 2 քառորդ և հավասարազոր է 2 դասընթացի: 10 պարտադիր դասընթացներն անցնելը անհրաժեշտ նախապայման է ընտրովի դասընթացների և գործարար նախագծի համար: Հիմնական դասընթացներն ուսանողները պետք է ավարտեն առաջին ուսումնական տարվա ընթացքում:

Պարտադիր դասընթացներ: Այս դասընթացները նախատեսված են ուսանողին ընդհանուր գիտելիքներ տալ ա) տնտեսագիտության, մաթեմատիկական մոդելավորման, քանակական ու վիճակագրական վերլուծությունների մեջ և համակարգիչների վրա հիմնված ինֆորմացիոն համակարգերում կիրառվող տարբեր վերլուծական հասկացությունների և միջոցների մասին, որոնք էական նշանակություն ունեն ժամանակակից բարդ տնտեսական միջավայրում արդյունավետ որոշումներ կայացնելու համար, բ) մարդկային գործոնի, կազմակերպչական կառուցվածքների ու վարքագծերի և այլ տնտեսական, քաղաքական ու սոցիալական ուժերի մասին, որոնք իրենց ազդեցությունն են ունենում ղեկավարության որոշումների ընդունման և ձևավորման վրա, գ) գործարարության և գործարար ղեկավարման գործունեության այնպիսի ասպարեզների մասին, ինչպիսիք են ֆինանսները, հաշվապահությունը, շուկայագիտությունը և կառավարումը:

Ընտրովի դասընթացներ: Երկրորդ ուսումնական տարվա ընթացքում ուսանողները կարող են առաջարկվող ընտրովի դասընթացներից ընտրել առնվազն 9 դասընթաց, որոնց նպատակն է խորացնել և ընդլայնել հիմնական դասընթացներից ստացած գիտելիքները: Անհրաժեշտության դեպքում, դեկանի համաձայնությամբ, ուսանողները կարող են մինչև երեք դասընթաց վերցնել ճարտարագիտության քոլեջում: Ծրագրի գործունեության առաջին տարիներին քոլեջի առաջարկած ընտրովի դասընթացները հիմնականում վերաբերվում են միջազգային գործարարությանը, շուկայագիտությանը, ֆինանսներին և բանկային գործին:

Գործարարության նախագիծ: Երկրորդ ուսումնական տարվա ընթացքում առաջարկվող այս պարտադիր դասընթացը գործարար ղեկավարման մագիստրոսի կոչում շնորհող ծրագրի գործնական ուսուցման բաղկացուցիչ մասն է, որի ընթացքում լսարանում սովորած նյութը կիրառվում է գործնականում: Ուսանողները, որոնք հիմնականում գործում են խմբերով, որպես խորհրդատու աշխատում են արտադրական, պետական կամ սպասարկման ոլորտի կազմակերպություններում: Նրանց հիմնական խնդիրն է քննել և լուծել կազմակերպության առաջ ծառացած ընթացիկ հրատապ հարցերը: Նախագիծը ուսանողներին հնարավորություն է տալիս վերհանել ու քննել խնդիրները, գնահատել դրանք և առաջարկել այլընտրական լուծումներ ու դրանց գործնական կիրառման ուղիներ: Չնայած գործարարության նախագիծը հիմնականում կատարվում է համալսարանից դուրս, այնուհանդերձ, այն ենթադրում է նաև որոշակի լսարանային աշխատանք, որի հիմնական նպատակն է զարգացնել նախագծի գործարար ղեկավարման և իրագործման մեթոդներ, ինչպես նաև գրավոր և բանավոր հաղորդակցման հմտություն: Նախագիծը կատարվում է 2 քառորդի ընթացքում և կազմում է 12 միավոր:

Մասնագիտացում: ԳՂՄ ծրագիրն առաջարկում է երկու մասնագիտական դասընթաց. մեկը ֆինանսավորման գծով, մյուսը՝ շուկայագիտության: Որևէ մասնագիտացումով ավարտելու համար ուսանողը պետք է ընտրած բնագավառի շրջանակներում անցնի չորս ընտրովի դասընթաց՝ առնվազն 3,0 միջին գնահատականով:

1992-1994 ԹԹ. ՀԱՅ ՀՐԱՎԻՐՎԱԾ ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ*

դոկտոր **Սամեր Ագարվալ**, Մոսկվայի Արդյունաբերական ինստիտուտ
կառավարման պրոֆեսոր
Բոստոնի Մասաչուսեթսի համալսարանի կառավարման քոլեջի պրոֆեսոր, դեկանի պաշտոնակատար և հետազոտությունների ղեկավար

դոկտոր **Ջեյմս Անդերսոն**, Վաշինգտոնի համալսարան
հաշվապահական հաշվառման պրոֆեսոր
Սան Լուիս Օբիսբոյի Կալիֆորնիայի պետական պոլիտեխնիկական համալսարանի Հաշվապահական հաշվառման բաժնի պրոֆեսոր և նախկին վարիչ

դոկտոր **Ռոնալդ Բենսոն**, Այովայի համալսարան, Այովա
կառավարման պրոֆեսոր
Դենբրրիի Արևմտյան Քոնեքթիքութի պետական համալսարանի կառավարման պրոֆեսոր, Քոնեքթիքութ

դոկտոր **Դիդրե Բրրդ**, Փըրդյուի համալսարան
շուկայագիտության կրտսեր պրոֆեսոր
Հյուսիսարևելյան համալսարանի կրտսեր պրոֆեսոր

դոկտոր **Վարդգես Լ. Բրուսալյան**, Կալիֆորնիայի համալսարան, Լոս Անջելես
տնտեսագիտության և ֆինանսների պրոֆեսոր
Նորթրիջի Կալիֆորնիայի պետական համալսարանի նախկին պրոֆեսոր, կառավարման և բյուջեի գրասենյակի նախկին գլխավոր տնտեսագետ

դոկտոր **Ա. Մայքլ Քոնրադ**, Սթևենսի տեխնոլոգիական ինստիտուտ
կառավարման կրտսեր պրոֆեսոր
Ֆիլադելֆիայի Լա Սալ համալսարանի կառավարման նախկին կրտսեր պրոֆեսոր

դոկտոր **Ալեն Ջ. Գրինվուդ**, Վիրջինիայի պոլիտեխնիկական ինստիտուտ և պետական համալսարան
շուկայագիտության և կառավարման կրտսեր պրոֆեսոր
Հյուսիսարևելյան համալսարանի ասիստենտ պրոֆեսոր

դոկտոր **Ֆարուկ Հեյբա**, Փենսիլվանիայի համալսարանի Ուորթընի դպրոց
շուկայագիտության պրոֆեսոր և շուկայագիտության ծրագրի ղեկավար
Սան Դիեգոյի Միացյալ Նահանգների միջազգային համալսարանի պրոֆեսոր և շուկայագիտության և միջազգային գործարարության ամբիոնի վարիչ

դոկտոր **Վահան Ջանջիկյան**, Վիրջինիայի պոլիտեխնիկական ինստիտուտ և պետական համալսարան
տնտեսագիտության, ֆինանսների և հաշվապահական հաշվառման կրտսեր պրոֆեսոր
Հյուսիսարևելյան համալսարանի ասիստենտ պրոֆեսոր

դոկտոր **Ստեփան Կարամարդյան**, Բերքլիի Կալիֆորնիայի համալսարանի
գործարարության և կառավարման քոլեջի դեկան և կառավարման պրոֆեսոր
Ռիվրսայդի Կալիֆորնիայի համալսարանի գործարար ղեկավարման մագիստրոսի կոչում շնորհող դպրոցի նախկին դեկան և վաստակավոր պրոֆեսոր

---

* Դասախոսների վերջին աշխատավայրը և զբաղեցրած պաշտոնը գրված են շեղատառ:

դոկտոր **Հարոլդ Քասարջյան**, Լոս Անջելեսի Կալիֆորնիայի համալսարան
շուկայագիտության պրոֆեսոր
Լոս Անջելեսի Կալիֆորնիայի համալսարանի Անդերսոնի մագիստրոսի կոչում շնորհող կառավարման դպրոցի շուկայագիտության պրոֆեսոր

դոկտոր **Ջորջ Գևորգյան**, Ամերիկյան համալսարան
ֆինանսների և կառավարման ինֆորմացիոն համակարգերի կրտսեր պրոֆեսոր
Հյուսիսային Վիրջինիայի հասարակական քոլեջի գործարարության և կառավարման վաստակավոր պրոֆեսոր

դոկտոր **Միքայել Քուշակճեան**, Կոլումբիայի համալսարան
կենսաքիմիա և մոլեկուլյար կենսաֆիզիկա
Լոս Անջելեսի Կալիֆորնիայի համալսարանի կառավարման մագիստրոս
Հայաստանի Ամերիկյան համալսարանի գործարար ղեկավարման ասիստենտ պրոֆեսոր

դոկտոր **Ջոզեֆ Ու. Մքգուայեր**, Կոլումբիայի համալսարան
կառավարման պատվավոր պրոֆեսոր
Ռիվրսայդի Կալիֆորնիայի համալսարանի վաստակավոր պրոֆեսոր

դոկտոր **Ըրլ Նաուման**, Արիզոնայի պետական համալսարան
շուկայագիտության պրոֆեսոր
Այդահոյի Բոյսի պետական համալսարանի շուկայագիտության և ֆինանսների բաժնի պրոֆեսոր և նախկին վարիչ

դոկտոր **Սինտիա Փավեթ**, Յութահ համալսարան, Սոլթ Լեյք Սիթի
կառավարման պրոֆեսոր
Սան Դիեգոյի համալսարանի կառավարման պրոֆեսոր

դոկտոր **Ըրլ Ու. Սնել**, Սթանֆորդի համալսարան
ֆինանսների պրոֆեսոր
Սոլթ Լեյք Սիթիի Ուեսթմինսթերի քոլեջի Ֆինանսների ծրագրի տնօրեն և ֆինանսների պրոֆեսոր

Գործարարության և կառավարման քոլեջ, դասախոսական կազմի ժողովը:
Ձախից աջ՝ Ջ. Անդերսոն, Ռ. Բենսոն, Ֆ. Հեյբա, Ս. Կարամարդյան, Ը. Սնել, Ա. Ասատրյան (Բերքլիի Կալիֆորնիայի համալսարանի գործարարության դոկտորանտ) և Հ. Քասարջյան:

ՊԱՐՏԱԴԻՐ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

200. Հավանականությունների տեսություն և որոշումների ընդունում անորոշության պայմաններում (4 միավոր): Շաբաթական երեք ժամ դասախոսություն և մեկուկես ժամ քննարկում:

Անհրաժեշտ նախապայման չկա:

Նկարագրությունը. դասընթացն ընդգրկում է հավանականությունների տեսության, որպես անորոշության գնահատման միջոցի, հիմնական հասկացությունների ներածությունը և դրանց կիրառումը գործարարության և կառավարման խնդիրներում, հատուկ ուշադրություն դարձնելով անորոշության պայմաններում որոշումների ընդունման վրա:

Թեմաները. պատահույթների հավանականության գնահատումը և դրանց հատկությունները, պայմանական հավանականություն, Բայեսի թեորեմը, պատահական փոփոխականներ և դրանց բաշխումները, նորմալ բաշխում, կենտրոնական սահմանային թեորեմը, որոշումների ծառեր, պատահական որոշումների մաթեմատիկական սպասում և կանխորոշման վերլուծություն:

201. Գործարարության վիճակագրություն և կանխատեսում (4 միավոր): Շաբաթական երեք ժամ դասախոսություն և մեկուկես ժամ քննարկում:

Անհրաժեշտ նախապայման՝ 200 կամ նմանատիպ դասընթաց:

Նկարագրությունը. դասընթացը ներկայացնում է գործարար կառավարման որոշումներ կայացնելիս կիրառվող վիճակագրական մեթոդների ներածությունը:

Թեմաները. պատահական ընտրություն և դրանց բաշխումները, պարամետրական և ոչ պարամետրական վիճակագրական եզրակացությունների մեթոդներ, պարզ և բազմակի ռեգրեսիա, գործարարության և կառավարման խնդիրներում կիրառվող կանխատեսման մեթոդները:

202. Գործարարության և կառավարման որոշումների քանակական մոդելներ և վերլուծություններ (4 միավոր): Շաբաթական երեք ժամ դասախոսություն և մեկուկես ժամ քննարկում:

Անհրաժեշտ նախապայման՝ ԳԼԿ 200 կամ նմանատիպ դասընթաց:

Նկարագրությունը. դասընթացը ներկայացնում է մաթեմատիկական մոդելների կառուցման, իրականությանը համապատասխանող գործարարության և կառավարման բարդ խնդիրների պլանավորման ու իրագործման վերլուծության և լուծման մեթոդների ներածություն: Այն ընդգրկում է դետերմինիստիկ և ստոխաստիկ մոդելներ:

Թեմաները. այլընտրանքային հնարավորության դեպքում սուղ ռեսուրսների օպտիմալ տեղաբաշխման խնդրի ձևակերպումը, գծային ծրագրավորում և սիմպլեքսների ալգորիթմը, երկվության և պարամետրիկ կախվածության վերլուծություններ, ցանցային մոդելներ, ամբողջ ծրագրավորում, գույքավորման մոդելներ, հերթերի մոդելներ, Մարկովի շղթաներ և բազմաստիճան դինամիկ որոշումների մոդելներ:

203. Գործարար որոշումների միկրոտնտեսական վերլուծություն (4 միավոր): Շաբաթական երեք ժամ դասախոսություն և մեկ ժամ քննարկում:

Անհրաժեշտ նախապայման չկա:

Նկարագրությունը. դասընթացը ներկայացնում է ձեռնարկության գործարար որոշումների տնտեսական վերլուծության ներածությունը՝ կապված գների որոշման, արտադրության մուտք ու ելքի և գործարար ստրատեգիաների վրա մրցակցային միջավայրի ունեցած ազդեցության հետ:

Թեմաները. առաջարկի և պահանջարկի կորերը, արտադրության ֆունկցիաները, ձեռնարկությունների ներդրումների որոշումը որոշակիության և անորոշության պայմաններում, գները կատարյալ մրցակցային շուկաներում, ընդհանուր հավասարակշռություն, մուտք – ելք վերլուծություն:

204. Տնտեսական վերլուծություն և տնտեսական քաղաքականություն (4 միավոր): Շաբաթական երեք ժամ դասախոսություն և մեկ ժամ քննարկում:

Անհրաժեշտ նախապայման՝ ԳԼԿ 203:

Նկարագրությունը. կառավարման որոշումներին խոչընդոտող տնտեսական պատճառների խորը վերլուծություն: Ազատ ձեռնարկության համակարգի գործունեությունը, ինչպես նաև գները, աշխատավարձերը և շահույթները որոշելիս տարբեր կողմերի՝ անհատների, արտադրական ձեռնարկությունների և կառավարության փոխներգործությունը հասկանալու համար հիմնական շեշտը դրվում է տնտեսագիտական տեսությունների կիրառման վրա:

Թեմաները. սպառողների ընտրությունը, գործարար ձեռնարկության վարքը, շուկայի կազմակերպման տեսակները, աշխատավարձի որոշում, տնտեսական բարեկեցության հարցեր, տնտեսական պայմանները, որոնց դեպքում կառավարությունը կարող է միջամտել տնտեսությանը:

205. Մակրոտնտեսական վերլուծություն գործարար որոշումների համար (4 միավոր): Շաբաթական չորս ժամ դասախոսություն:

Անհրաժեշտ նախապայման չկա:

ինֆորմացիոն պահանջների վերլուծություն, տվյալների մոդելներ, տվյալների հոսքի դիագրամներ, համակարգչային ծրագրեր:

212. Արտադրության և գործունեության կառավարում (4 միավոր): Շաբաթական երեք ժամ դասախոսություն և մեկ ժամ քննարկում:
Անհրաժեշտ նախապայման՝ ԳԿԿ 201 և ԳԿԿ 202:
Նկարագրությունը. դասընթացը ձեռնարկության՝ ներդրումները ծառայությունների և պատրաստի արտադրանքի փոխակերպող գործունեության կառավարման մեջ օգտագործվող հասկացությունների և վերլուծական մեթոդների ներածությունն է: Վերլուծությունների մակարդակը փոփոխվում է գործողությունների ստրատեգիայից մինչև արտադրության գործընթացի ամենօրյա վերահսկումը:
Թեմաները. արտադրողականության մակարդակի որոշում, հիմնական սարքավորումների ընտրություն, կանխորոշում, գույքի մոդելավորում և վերահսկողություն, պահանջվող արտադրական նյութերի պլանավորում, ընդհանուր որակի գնահատում և կառավարում, արտադրական հզորությունների պլանավորում, նախագծի ղեկավարում:

Հաշվապահական հաշվառման ընտրովի դասընթացներ *

220. Հաշվապահական համակարգեր և վերահսկողություն (4 միավոր): Շաբաթական չորս ժամ դասախոսություն և մեկ ժամ քննարկում:
Անհրաժեշտ նախապայման՝ ԳԿԿ 206:
Նկարագրությունը. դասընթացն ընդգրկում է հաշվապահական համակարգերի, ներառյալ վաճառքի, ստանալիք գումարների, գնումների, կանխիկ գումարների ստացման և ծախսման, աշխատավարձի, արտադրության վերահսկման և այլ համակարգերի մշակման ու կիրառման հարցեր: Հիմնական ուշադրություն է դարձվում ստուգումների, ներքին հաշվառման հսկողության և առնչակից այլ թեմաների վրա:

221. Ծախսի հաշվառում (4 միավոր): Շաբաթական երեք ժամ դասախոսություն և մեկ ժամ քննարկում:
Անհրաժեշտ նախապայման՝ ԳԿԿ 206:
Նկարագրությունը. դասընթացը լուսաբանում է տնտեսական գործունեության փոփոխումը, կախված ֆինանսական հաշվետվություններից, գործող կապիտալի և գործարանի հեռանկարային հիմնական ֆոնդերի գնահատումից և այդ մասին հաշվետվությունից, ոչ նյութական հիմնական միջոցներից, հեռանկարային կապիտալի աղբյուրներից, ֆոնդերի մասին հաշվետվություններից, ֆինանսական վերլուծությունից և համագործակցության արդյունավետության հաշվառումից:

222. Ստուգում (4 միավոր): Շաբաթական երեք ժամ դասախոսություն և մեկ ժամ քննարկում:
Անհրաժեշտ նախապայման՝ ԳԿԿ 206:
Նկարագրությունը. դասընթացը ներկայացնում է ստուգողի կողմից ֆինանսական փաստաթղթերի ուսումնասիրման ու հաշվետվության հիմքում ընկած տեսությունն ու պրակտիկան: Ներառում է մասնագիտական էթիկայի, ներքին վերահսկողության և հսկողության կարգի ընտրությանն ու կիրառմանը վերաբերող հարցեր, հիմնական շեշտը դնելով ստուգման համընդհանուր չափանիշների վրա:

223. Միջազգային հաշվապահական հաշվառում (4 միավոր): Շաբաթական երեք ժամ դասախոսություն և մեկ ժամ քննարկում:
Անհրաժեշտ նախապայման՝ ԳԿԿ 206:
Նկարագրությունը. լուսաբանվում են հաշվապահության և հսկողության միջազգային չափանիշներին, տարադրամի գործառության քաղաքականությանը, գործառությունների հաշվետվության և բացահայտումների, հաշվառման և ստուգման միջազգային չափանիշներին վերաբերող հարցեր:

Ֆինանսների ընտրովի դասընթացներ *

230. Դրամի և կապիտալի շուկաներ (4 միավոր): Շաբաթական երեք ժամ դասախոսություն և մեկ ժամ քննարկում:
Անհրաժեշտ նախապայման՝ ԳԿԿ 207:
Նկարագրությունը. պարտատոմսերի, գրավաթղթերի, բաժնետոմսերի և ֆինանսական այլ շուկաներում գների որոշման հարցում շահադրույքի տեսության և շրջանառու ֆոնդերի վերլուծության կիրառումը, ֆոնդերի հոսքը վարկային շուկաներից, առանձին արդյունաբերական ճյուղերում կապիտալի ծախսերի վերլուծության հարցեր:

231. Ֆինանսական հաստատությունների կառավարում (4 միավոր): Շաբաթական երեք ժամ դասախոսություն և մեկ ժամ քննարկում:
Անհրաժեշտ նախապայման՝ ԳԿԿ 207:
Նկարագրությունը. առևտրային բանկերի, խնայողական և վարկային ընկերությունների, նպաստների ֆոնդի, ապահովագրական կազմակերպությունների և այլ կարևոր ֆինանսական հաստատությունների ֆինանսական քաղաքականության և պրակտիկայի ուսումնասիրություն, այդ հաստատությունների բարձրաստիճան

* Առաջարկվող ընտրովի դասընթացները վերաբերում են գործարարության և կառավարման տարբեր բնագավառներին և նպատակ ունեն ուսանողին հնարավորություն տալ մասնագիտանալու որևէ որոշակի բնագավառում կամ ընդլայնել գործարարությանն ու կառավարմանը վերաբերող իրենց գիտելիքները: Ընտրովի դասընթացները տարեցտարի կարող են փոփոխվել:

կառավարիչների առջև ծառացած ընթացիկ կարևոր խնդիրների քննարկում:

232. Միջազգային ֆինանսական շուկաներ (4 միավոր): Շաբաթական երեք ժամ դասախոսություն և մեկ ժամ քննարկում:
Անհրաժեշտ նախապայման՝ ԳԼԿ 207:
Նկարագրությունը. տարադրամի շուկայի, եվրոպական տարադրամի շուկայի, պարտատոմսերի միջազգային շուկաների և տարբեր երկրների արժեթղթերի շուկաների ուսումնասիրություն: Հիմնական շեշտը դրվում է դրանց հիմքում ընկած դրույթների վրա, սակայն մանրամասն ուսումնասիրվում են նաև այն հաստատությունների առանձնահատկությունները, որոնք անհրաժեշտ են շուկաների կառուցվածքը և գործունեությունը հասկանալու համար:

233. Ընդհանուր ֆինանսներ (4 միավոր): Շաբաթական երեք ժամ դասախոսություն և մեկ ժամ քննարկում:
Անհրաժեշտ նախապայման՝ ԳԼԿ 207:
Նկարագրությունը. ֆինանսական կառավարման հիմնական որոշումների ոլորտների քննարկումը՝ ուղղված բոլոր տեսակի կազմակերպությունների համար կիրառելի սկզբունքներին: Հիմնական ուշադրությունը դարձվում է ֆինանսական պլանավորմանն ու հսկողությանը, ֆոնդերի աղբյուրներին, զարգացման հեռանկարներին և չափանիշներին, որոնք հնարավոր են դարձնում կազմակերպության ռեսուրսների արդյունավետ տեղաբաշխումն ու օգտագործումը:

234. Օպցիոններ և փոխարկելի արժեթղթեր (4 միավոր): Շաբաթական երեք ժամ դասախոսություն և մեկ ժամ քննարկում:
Անհրաժեշտ նախապայման՝ ԳԼԿ 207:
Նկարագրությունը. կազմակերպված պայմանագրային արժեթղթերի շուկաների դերն ու կազմակերպումը, վեճեր և խոչընդոտող հարաբերություններ, օպցիոների արժեվորում, օպցիոների իրացում, առևտրական ստրատեգիաներ, որպես օպցիոն ընդհանուր արժեթղթերի հեռանկարը, օպցիոնների դերը արժեթղթերի շուկաներում և նորամուծությունները օպցիոնների շուկաներում:

235. Ներդրումներ (4 միավոր): Շաբաթական երեք ժամ դասախոսություն և մեկ ժամ քննարկում:
Անհրաժեշտ նախապայման՝ ԳԼԿ 207:
Նկարագրությունը. դասընթացը նվիրված է ներդրումների շուկաների վարքագծի ուսումնասիրմանը և արժեթղթերի գների որոշմանը:
Թեմաները. արժեթղթերի վերլուծություն, ֆիքսված եկամուտների արժեթղթերի ղեկավարում, արժեթղթերի փաթեթի ղեկավարում, գույքային արժեթղթերի ներդրման ստրատեգիաներ: Կուսումնասիրվեն նաև արժեթղթերի շուկաներին և առևտրական հաստատություններին վերաբերող այլ նյութեր:

Տ-ն Մադլեն Օլբրայթի՝ Միացյալ ազգերի կազմակերպությունում ԱՄՆ ներկայացուցչի այցը ՀԱՀ

ՃԱՐՏԱՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՔՈԼԵՋ



Պրոֆեսոր Ռիչարդ Վուդսը ճարտարագիտության քոլեջում

ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԾՐԱԳԻՐԸ



Դոկտոր Արմեն Տեր-Կյուրեղյանը ՀԱՀ-ի ճարտարագիտության քոլեջի դեկանն է, ինչպես նաև ճարտարագիտական հետազոտությունների կենտրոնի տնօրենը: Բերքլիի Կալիֆորնիայի համալսարանի քաղաքացիական ճարտարագիտության պրոֆեսոր Արմեն-Տեր Կյուրեղյանը եղել է Ֆուլբրայթի թոշակառու, ամերիկյան քաղաքացիական ճարտարագետների ընկերության Ու. Լ. Հյուբերի հետազոտական մրցանակի մրցանակակիր, ինչպես նաև Տոկիոյի համալսարանի Միցուբիշիի ծանր արդյունաբերության բաժնի հրավիրյալ վարիչ:

Ճարտարագիտության քոլեջի երկրաշարժակայուն ճարտարագիտության և արդյունաբերական ճարտարագիտության բաժիններն առաջարկում են ճարտարագիտության մագիստրոսի կոչում շնորհող ծրագրեր: Այս ծրագրերը հնարավորություն են տալիս մասնագետներ պատրաստել Հայաստանի և ընդհանրապես տարածաշրջանի համար կարևոր նշանակություն ունեցող բնագավառում:

Հայաստանը երկրաշարժերի երկիր է: Ավերիչ երկրաշարժերի մասին տեղեկությունները մեզ են հասնում դեռևս Ք.ա. I դարից: Հարյուրավոր տարիներ պահպանված քարե եկեղեցիները, ամրոցներն ու այլ շինությունները վկայում են, որ հայ շինարարները եղել են ճարտարամիտ և տեղական շինությունների վրա երկրաշարժերի ունեցած ազդեցություններին: Սակայն ներկայումս շինարարության մեջ օգտագործվող թեթև կառուցվածքները պահանջում են ավելի խորը գիտելիքներ երկրաշարժերի ազդեցության մասին, ինչպես նաև նախագծման նոր մեթոդների կիրառում՝ դիմակայելու ավերիչ երկրաշարժերին:

1988 թվականի Սպիտակի ողբերգական երկրաշարժը, որն այս համալսարանի հիմնադրման պատճառ հանդիսացավ, բացահայտեց երկրաշարժային ճարտարագիտության առաջավոր մեթոդների ուսումնասիրության անհրաժեշտությունը ինժեներների նոր սերունդ պատրաստելու գործում, որոնք զինված կլինեն երկրաշարժադիմացկուն շինություններ և բնակելի տներ նախագծելու և կառուցելու համար անհրաժեշտ գիտելիքներով ու ժամանակակից մեթոդներով: Երկրաշարժակայուն ճարտարագիտության ծրագիրը, որը կազմվել է Բերքլիի Կալիֆորնիայի համալսարանի համանման ծրագրին համապատասխան, անհրաժեշտ գիտելիքներ է տալիս ճարտարագիտական երկրաշարժագիտության, կառուցվածքային և երկրատեխնիկական ճարտարագիտության և ժամանակակից համակարգչային մեթոդների բնագավառում: Դասախոսությունները լրացվում են Սպիտակի երկրաշարժի գոտի կատարվող ուսումնական ուղևորություններով, շինարարական նախագծերով ու հետազոտական լաբորատոր աշխատանքներով: Բացի այդ, ճարտարագիտական հետազոտությունների կենտրոնում ուսանողները ակտիվորեն մասնակցում են Հայաստանի երկրաշարժակայուն ճարտարագիտության խնդիրներին վերաբերող վերլուծական և փորձարարական հետազոտական նախագծերի աշխատանքներին:

Հայաստանը գիտության և տեխնոլոգիայի մեծ ավանդույթներ ունի: Լինելով սակավահող երկիր, Հայաստանը պետք է զարգացնի ժամանակակից արդյունաբերություն, որի արտադրանքն իր որակով, քանակով և ծախսի արդյունավետությամբ մրցունակ լինի համաշխարհային շուկայում: Խորհրդային արդյունաբերությունից ազատ շուկայի և մրցակցության սկզբունքների վրա հիմնված պետական և մասնավոր արդյունաբերությանն անցումը պահանջում է պատրաստել ճարտարագետների նոր սերունդ, որը զինված լինի արդյունաբերական կառավարման, արտադրության և աշխատուժի կառավարման ժամանակակից մեթոդների իմացությամբ: Արդյունաբերական ճարտարագիտության ծրագիրը հենց նպատակաուղղված է պատրաստել արդյունաբերության կառավարման, գործարանների, արտադրական շինությունների և մարդ-մեքենա համակարգերի նախագծման, տնտեսագիտության և որոշումների ընդունման, հուսալիության և որակի վերահսկման, ինչպես նաև ժամանակակից արտադրության բնագավառներում խորը գիտելիքներ ունեցող շրջանավարտներ: Դասախոսությունները լրացվում են տարբեր արտադրական կենտրոններ ու գործարաններ կատարվող ուսումնական այցելություններով: Ուսանողները նաև ակտիվ մասնակցություն են ունենում Հայաստանի ընթացիկ խնդիրների հետ կապված հետազոտական նախագծերի աշխատանքներին: Կարծում ենք, որ այս ծրագրի շրջանավարտները հիմնարար դեր կխաղան Հայաստանի արդյունաբերության վերափոխման գործընթացում, ինչպես նաև մեծապես օգտակար կլինեն երկրի արդյունաբերական և սպասարկման ոլորտներում ստեղծվող մասնավոր ձեռնարկություններում:

Արմեն Տեր-Կյուրեղյան

ՔՈԼԵՋԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Համալսարանի ընդունելության ընդհանուր պահանջները բավարարելուց բացի, որոնք շարադրված են սույն տեղեկատուի «Ընդունելությունը» բաժնում՝ սկսած 5-րդ էջից, Ճարտարագիտության քոլեջ ընդունվել ցանկացողները, որպես նվազագույն պայման, պետք է հաջողությամբ ավարտած լինեն բուհական հետևյալ առարկաները. բարձրագույն մաթեմատիկայի 2 տարվա դասընթաց, որն ընդգրկում է դիֆերենցիալ և ինտեգրալ հաշիվ, գծային հանրահաշիվ և դիֆերենցիալ հավասարումներ, ֆիզիկայի 1 տարվա դասընթաց, քիմիայի կես տարվա դասընթաց, ճարտարագիտական մեխանիկայի հիմնական դասընթաց և նյութերի դիմադրության դասընթաց:

Քոլեջի յուրաքանչյուր բաժնի լրացուցիչ պահանջների մասին կխոսվի ստորև:

ՔՈԼԵՋՆ ԱՎԱՐՏԵԼՈՒ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Ճարտարագիտության մագիստրոսի կոչում ստանալու համար ուսանողները պետք է հաջողությամբ լրացնեն 72 քառորդային միավոր (չհաշված 298 դասընթացները), որոնցից ստացած գնահատականների միջինը պետք է կազմի առնվազն 3,0՝ ներառյալ դիպլոմային աշխատանքը: Ուսումնական ծրագիրը պետք է ներառի հիմնական մասնագիտական դասընթացների առնվազն 40 միավոր, նեղ մասնագիտական դասընթացների առնվազն 12 միավոր, ինչպես նաև դիպլոմային աշխատանքի համար կատարվող անհատական հետազոտության (299) 8 միավոր: Հիմնական մասնագիտական բոլոր դասընթացների գնահատումը կատարվում է տառերով: Մնացած դասընթացներից առավելագույնը 2-ը (բացի 299-ից) թույլատրվում է հանձնել որպես ստուգարք: Դիպլոմային աշխատանքը գնահատում են աշխատանքի ղեկավարը, որը դասախոսական կազմից է, և քոլեջի դեկանը:

ՀՐԱՎԻՐՎԱԾ ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ. ՃԱՐՏԱՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՔՈԼԵՋ, 1992-1994 ԹԹ.*

դոկտոր **Ռաշփալ Ահլուվալիա**, Արևմտյան Օնտարիոյի համալսարան, Կանադա
արդյունաբերական ճարտարագիտության պրոֆեսոր
Արևմտյան Վիրջինիայի համալսարանի պրոֆեսոր

Ռուբեն Վ. Համբարձումյան, գիտությունների դոկտոր. Ստեկլովի անվան ինստիտուտ, Մոսկվա
արդյունաբերական և երկրաշարժակայուն ճարտարագիտության պրոֆեսոր
Հայաստանի գիտությունների ակադեմիայի մաթեմատիկայի ինստիտուտի պրոֆեսոր

դոկտոր **Արա Արաբյան**, Հարավային Կալիֆորնիայի համալսարան
երկրաշարժակայուն և արդյունաբերական ճարտարագիտության կրտսեր պրոֆեսոր
Արիզոնայի համալսարանի կրտսեր պրոֆեսոր

դոկտոր **Ամի Արբել**, Ստանֆորդի համալսարան
արդյունաբերական ճարտարագիտության կրտսեր պրոֆեսոր
Իսրայելի Թել Ավիվի համալսարանի կրտսեր պրոֆեսոր

դոկտոր **Արա Ս. Ավագյան**, Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտ
երկրաշարժակայուն և արդյունաբերական ճարտարագիտության պրոֆեսոր
Ֆրեզնոյի Կալիֆորնիայի պետական համալսարանի պրոֆեսոր

դոկտոր **Ռիչարդ Հ. Բերնհարդ**, Կորնելի համալսարան
արդյունաբերական ճարտարագիտության պրոֆեսոր
Հյուսիսային Կարոլինայի պետական համալսարանի պրոֆեսոր

---

* Դասախոսների վերջին աշխատավայրը և զբաղեցրած պաշտոնը գրված են շեղատառ:

դոկտոր **Վիթլոմո Վ. Բերտերո**, Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտ
երկրաշարժակայուն ճարտարագիտության պատվավոր պրոֆեսոր
Բերքլիի Կալիֆորնիայի համալսարանի վաստակավոր պրոֆեսոր

դոկտոր **Բրուս Ա. Բոլթ**, Սիդնեյի համալսարան
երկրաշարժակայուն ճարտարագիտության պատվավոր պրոֆեսոր
Բերքլիի Կալիֆորնիայի համալսարանի պրոֆեսոր

դոկտոր **Ա. Մայքլ Քոնրադ**, Սթիվենսի տեխնոլոգիական ինստիտուտ
արդյունաբերական ճարտարագիտության կրտսեր պրոֆեսոր
Ֆիլադելֆիայի Լա Սալեի համալսարանի կառավարման կրտսեր պրոֆեսոր

Էդուարդ Քրանավիկ, դոկտորության թեկնածու, Կոլումբիայի համալսարան
երկրաշարժակայուն ճարտարագիտության դասախոս
Միացյալ Նահանգների երկրաբանական տեղագրական վարչության երկրաֆիզիկոս

դոկտոր **Արմեն Տեր-Կյուրեղյան**, Իլինոյսի համալսարան
երկրաշարժակայուն ճարտարագիտության պրոֆեսոր, ճարտարագիտության քոլեջի դեկան
Բերքլիի Կալիֆորնիայի համալսարանի պրոֆեսոր

դոկտոր **Ջոզեֆ Դևնի**, Կալիֆորնիայի տեխնոլոգիական ինստիտուտ
շրջակա միջավայրի կառավարման կրտսեր պրոֆեսոր
Հարավային Կալիֆորնիայի համալսարանի քաղաքացիական ճարտարագիտության կրտսեր պրոֆեսոր

մագիստրոս **Մարտին Լ. Էսկիջյան**, Հարավային Կալիֆորնիայի համալսարան
երկրաշարժակայուն և արդյունաբերական ճարտարագիտության դասախոս
նավթահանքերի ճարտարագետ, Կալիֆորնիայի հողերի պետական կոմիտե

դոկտոր **Չարլզ Դ. Ֆայնշտայն**, Ստանֆորդի համալսարան
արդյունաբերական ճարտարագիտության կրտսեր պրոֆեսոր
Սանտա Կլարայի համալսարանի կրտսեր պրոֆեսոր

դոկտոր **Ֆիլիպ Գեյսկենս**, Բելգիայի Լյուվենի կաթոլիկ համալսարան
երկրաշարժակայուն և արդյունաբերական ճարտարագիտության ասիստենտ պրոֆեսոր
Բերքլիի Կալիֆորնիայի համալսարանի հետդոկտորական գիտաշխատող

Ջոն Մ. Գլիսոն, գործարար ղեկավարման դոկտոր, Ինդիանայի համալսարան
արդյունաբերական ճարտարագիտության պրոֆեսոր
Քրայթոնի համալսարանի որոշումների ընդունման և համակարգերի պրոֆեսոր

դոկտոր **Ալեն Գ. Գրինվուդ**, Վիրջինիայի պոլիտեխնիկական ինստիտուտ և պետական համալսարան
շուկայագիտության և կառավարման կրտսեր պրոֆեսոր
Հյուսիս-արևելյան համալսարանի ասիստենտ պրոֆեսոր

Աշոտ Ս. Հակոբյան, գիտությունների թեկնածու, Երևանի պետական համալսարան
երկրաշարժակայուն ճարտարագիտության դասախոս
Հայաստանի գիտությունների ակադեմիայի մեխանիկայի ինստիտուտի գիտաշխատող

դոկտոր **Դենիս Ռ. Հիլտունեն**, Միչիգանի համալսարան
երկրաշարժակայուն ճարտարագիտության ասիստենտ պրոֆեսոր
Փենսիլվանիայի պետական համալսարանի ասիստենտ պրոֆեսոր

դոկտոր **Մովսես Ջ. Քալաջյան**, Միչիգանի համալսարան
երկրաշարժակայուն ճարտարագիտության պրոֆեսոր
Ան Արբորի Միչիգանի համալսարանի պրոֆեսոր

դոկտոր **Համո Լալեզարյան**, Արլինգթոնի Տեխասի համալսարան
արդյունաբերական ճարտարագիտության կրտսեր պրոֆեսոր
Ֆրեզնոյի Կալիֆորնիայի պետական համալսարանի պրոֆեսոր

Միքայել Մելքումյան, գիտությունների թեկնածու, Երևանի ճարտարագիտական համալսարան
երկրաշարժակայուն ճարտարագիտության դասախոս
Հայաստանի սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայության
երկրաշարժակայուն ճարտարագիտության կենտրոնի տնօրեն

դոկտոր **Մանսուր Նիազի**, Բերքլիի Կալիֆորնիայի համալսարան
երկրաշարժակայուն ճարտարագիտության ավագ դասախոս
խորհրդատու երկրաֆիզիկոս, Բերքլի

դոկտոր **Շմուել Ս. Օրեն**, Ստանֆորդի համալսարան
արդյունաբերական ճարտարագիտության պրոֆեսոր
Բերքլիի Կալիֆորնիայի համալսարանի պրոֆեսոր

մագիստրոս **Ռոյ Մ. Ստիֆեն**, Բերքլիի Կալիֆորնիայի համալսարան
երկրաշարժակայուն ճարտարագիտության դասախոս
Բերքլիի Կալիֆորնիայի համալսարանի ճարտարագետ-հետազոտող

դոկտոր **Ֆրիդրիխ Ֆ. Թաջարյան**, Բերքլիի Կալիֆորնիայի համալսարան
երկրաշարժակայուն ճարտարագիտության դասախոս
Սան Ֆրանցիսկոյի «Բեխտել» ընկերության ճարտարագիտության մասնագետ

դոկտոր **Աբայ Վ. Թրիվեդի**, Հյուսիսային Դակոտայի պետական համալսարան
արդյունաբերական ճարտարագիտության կրտսեր պրոֆեսոր
Հյուսիսային Իլինոյի համալսարանի կրտսեր պրոֆեսոր

Գագիկ Ցատուրյան, գիտությունների թեկնածու, Ուկրաինայի գիտությունների
ակադեմիայի մաթեմատիկայի ինստիտուտ
արդյունաբերական ճարտարագիտության կրտսեր պրոֆեսոր
Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի կրտսեր պրոֆեսոր

դոկտոր **Վաղարշակ Վարդանյան**, Լոս Անջելեսի Կալիֆորնիայի համալսարան
երկրաշարժակայուն ճարտարագիտության դասախոս
Հարավային Կալիֆորնիայի համալսարանի գիտաշխատող

դոկտոր **Ռիչարդ Դ. Վուդս**, Միչիգանի համալսարան
երկրաշարժակայուն ճարտարագիտության դասախոս
Ան Արբորի Միչիգանի համալսարանի պրոֆեսոր

ԵՐԿՐԱՇԱՐԺԱԿԱՅՈՒՆ ՃԱՐՏԱՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

Երկրաշարժակայուն ճարտարագիտության քոլեջ ընդունվել կարող են բուհերի քաղաքացիական ճարտարագիտություն, մեխանիկական ճարտարագիտություն, կիրառական մեխանիկա, ճարտարապետություն կամ համանման մասնագիտություններով շրջանավարտները: Ճարտարագիտության կամ մաթեմատիկայի և մյուս բնական գիտությունների այլ մասնագիտություններով բուհ ավարտած ուսանողները նախքան այս ծրագրին դիմելը պետք է մի շարք նախապատրաստական դասընթացներ անցնեն:

ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԸ

200. Ճարտարագիտական մաթեմատիկա (4): Շաբաթական երեք ժամ դասախոսություն և մեկ ժամ քննարկում:
Անհրաժեշտ նախապայման չկա: Սովորական և մասնակի ածանցյալներով դիֆերենցիալ հավասարումներ, Լապլասի ձևափոխություններ, Ֆուրյեի շարքեր և ինտեգրալներ, գծային հանրահաշիվ, ճարտարագիտական կիրառության օրինակներ:

205. Ճարտարագիտական թվային վերլուծություն (4): Շաբաթական երեք ժամ դասախոսություն և մեկ ժամ քննարկում:
Անհրաժեշտ նախապայման՝ 200 կամ նմանատիպ դասընթացներ: Գծային և ոչ գծային հանրահաշվական և դիֆերենցիալ հավասարումների համակարգերի թվային լուծման մեթոդներ, Ֆուրյեի ձևափոխություններ, օպտիմիզացիա, սեփական արժեքների վերլուծություն: Շեշտը դրվում է ճարտարագիտական խնդիրների լուծման մեջ համակարգիչների օգտագործման վրա:

210. Երկրաշարժագիտության ներածություն (4): Շաբաթական երեք ժամ դասախոսություն և մեկ ժամ քննարկում:
Անհրաժեշտ նախապայման չկա: Երկրաշարժերի պատճառներն ու հետևանքները. երկրաշարժի աղբյուրի մեխանիկան, սալերի տեկտոնիկ տեսություն: Երկրի կառուցվածքը: Երկրաշարժերի գոյությունը ժամանակի և տարածության մեջ: Երկրաշարժակայունության մոդելներ: Սեյսմիկ ալիքների առաջացումը: Սեյսմիկ ալիքների տեսակները: Սեյսմոգրամների վերլուծությունը: Երկրաշարժի տեղի և չափի որոշումը:

211. Ուժեղ տատանումների երկրաշարժագիտություն (4): Շաբաթական երեք ժամ դասախոսություն և մեկ ժամ քննարկում:
Անհրաժեշտ նախապայման՝ 210: Գետնի ուժեղ ցնցումներ չափող գործիքներ:
Ակսելերոգրամների վերլուծություն: Գետնի ուժեղ ցնցումների առանձնահատկությունները: Ազդեցությունների նվազեցման օրենքները: Հողի և երկրաբանական գործոնների ազդեցությունը: Երկրաշարժի վտանգի վերլուծություն: Սինթետիկ ակսելերոգրամների հաշվարկում:

220. Կառուցվածքների տեսություն (4): Շաբաթական երեք ժամ դասախոսություն և մեկ ժամ քննարկում:
Անհրաժեշտ նախապայման՝ կառուցվածքների վերլուծության հիմնական դասընթաց: Էներգիայի թեորեմները և դրանց կիրառությունը: Սահքի դեֆորմացիաները հեծաններում: Կոշտության մեթոդով շրջանակային կառույցների մատրիցային վերլուծություն համակարգիչների օգտագործմամբ: Ջերմաստիճանի ազդեցությունը: Շրջանակների վարքը և վերլուծության մոտավոր մեթոդները:

221. Կառույցների դինամիկ վերլուծություն (4): Շաբաթական երեք ժամ դասախոսություն և մեկ ժամ քննարկում:
Անհրաժեշտ նախապայման՝ 220: Կառույցների ներկայացումը որպես մեկ կամ մի քանի ազատության աստիճան ունեցող համակարգեր, տատանման նորմալ միջինի վերլուծություն, ազատ և հարկադրական տատանումներ, հիմքի տատանման հակազդեցությունը: Ճշգրիտ և մոտավոր մեթոդներ, հակազդեցության սպեկտրի մեթոդը: Կառույցների ոչ առաձգական հակազդեցություն: Համակարգչային ծրագրերի կիրառություն:

223. Կառուցվածքային վերլուծության համակարգչային մեթոդներ (4): Շաբաթական երեք ժամ դասախոսություն և մեկ ժամ քննարկում:
Անհրաժեշտ նախապայման՝ 221, ծրագրավորում «Ֆորտրան» լեզվով: Թվային մեթոդների և համակարգչային ծրագրավորման օգտագործումը գծային և ոչ գծային կառուցվածքների ստատիկ և դինամիկ վերլուծության մեջ: Նոսր մատրիցների լուծում, սեփական արժեքների խնդիրներ, իտերացիա, հաջորդական մոտավորությունների ալգորիթմներ: Կիրառություն ֆիրմաների և շրջանակային կառուցվածքների համար Դասընթացը նախատեսում է համակարգչային ծրագրավորում և առկա ընդհանուր ծրագրերի կիրառում:

226. Կառույցների պատահական տատանումներ (4): Շաբաթական երեք ժամ դասախոսություն և մեկ ժամ քննարկում:

Անհրաժեշտ նախապայման՝ 221 և արդ. ճարտ. 210: Պատահական պրոցեսների ներածություն: Ստացիոնար և ոչ ստացիոնար պրոցեսներ: Կոռելացիա և ցուցչային սպեկտրալ խտության ֆունկցիաներ, աճող ցուցչային սպեկտրալ խտություն: Գծային կառուցվածքների դինամիկ հակազդեցությունը ստացիոնար և ոչ ստացիոնար ազդակներին: Հատումների վիճակագրությունը և առաջին շեղման հավանականությունը: Ծանոթություն ոչ գծային պատահական տատանումների հետ: Պատահական պրոցեսների առաջացումը: Համակարգիչների կիրառություն:

230. Կառույցների մեխանիկա (4): Շաբաթական երեք ժամ դասախոսություն և մեկ ժամ քննարկում:

Անհրաժեշտ նախապայման՝ դեֆորմացվող մարմինների մեխանիկայի հիմնական դասընթաց: Բեռնավորված կառուցվածքի անդամների վերլուծություն՝ լարում, դեֆորմացիա, համատեղելիություն: Լարում-դեֆորմացիա կապը առաձգական և ճկուն առաձգական նյութերում: Աշխատանք, էներգիա և օգտակար աշխատանք: Հեծանների, սյուների և սալերի ծռում հեծանների առաձգական հիմքի վրա: Ոլորում: Սյուների և սալերի առաձգական և ճկուն ճկում:

235. Վերջավոր տարրերի մեթոդներ (4): Շաբաթական երեք ժամ դասախոսություն և մեկ ժամ քննարկում:

Անհրաժեշտ նախապայման՝ 221 և 230: Փոփոխվող մոտեցում վերջավոր տարրերի մեթոդի ձևակերպման նկատմամբ: Կոորդինատային համակարգեր, թվային ինտեգրման մեթոդներ: 1–D, 2–D և 3–D հիմնական տարրերը, առանցքասիմետրիկ թաղանթներ և պինդ մարմիններ, սալաձև ծռվող տարրեր: FE ծրագրի կիրառումը եզրային խնդիրները լուծելիս:

240. Բետոնի տեխնոլոգիա (4): Շաբաթական երկու ժամ դասախոսություն և չորս ժամ լաբորատոր աշխատանք:

Անհրաժեշտ նախապայման՝ նյութերի դիմադրության հիմնական դասընթաց: Բետոնի բաղադրամասերի, ինչպես, օրինակ, համակցող զանգվածի և հիդրոլիկ ցեմենտի տարբեր տեսակների բաղադրությունը և հատկությունները, պնդացման և որակի ապահովում, թարմ և պնդացած բետոնի հատկությունները. զանգվածային բետոն, թեթև բետոն, ծանր բետոն, խառնուրդների ներգործությունը: Ֆիբրաբետոն:

242. Պողպատե կառույցների նախագծում (4): Շաբաթական երեք ժամ դասախոսություն և մեկ ժամ քննարկում:

Անհրաժեշտ նախապայման՝ 220: Պողպատե շինարարական կառույցների նախագծում: Պողպատի մեխանիկական հատկությունները: Թույլատրվող լարումներ, ճկուն նախագծման մեթոդները: Կառույցների տարբեր բաղադրիչ մասերի և հանգույցների վարքագիծն ու նախագծումը, հատուկ ուշադրություն դարձնելով սեյսմիկ բեռնվածության նախագծմանը:

244. Երկաթբետոնե կառույցների վարքագիծ և նախագծում (4): Շաբաթական երեք ժամ դասախոսություն և մեկ ժամ քննարկում:

Անհրաժեշտ նախապայման՝ 220: Բետոնի և պողպատի հատկությունները, զսպող ուժն ու ճաքի գոյացումը երկաթբետոնում: Նախագծման չափանիշները: Առանցքային ուժի, ծռման, սահքի և համակցված բեռնվածության ազդեցության տակ գտնվող երկաթբետոնե կառույցների բաղադրիչ մասերի ամրությունն ու դեֆորմացիայի բնութագիրը: Կոտրվելու պայմանները: Բեռի և միջավայրի ազդեցությունը: ACI կոդի ամփոփումը:

245. Նախալարված բետոնե կառույցներ (4): Շաբաթական երեք ժամ դասախոսություն և մեկ ժամ քննարկում:

Անհրաժեշտ նախապայման՝ 244: Ստատիկորեն կայուն նախալարված բետոնե կառույցների վարքը ծռման մոմենտների, սահքի, ոլորման և առանցքային բեռնվածության ազդեցությունների ներքո, դրանց նախագծումը: Անընդհատ նախալարված հեծանների, շրջանակների, սալերի և թաղանթների նախագծում: Հանգույցների նախագծում: Ժամանակից կախված ազդեցություններ և ճկվածքներ, երկրաշարժակայունության նախագծման նկատառումներ:

247. Երկրաշարժակայուն կառույցների նախագծում (4): Շաբաթական երեք ժամ դասախոսություն և մեկ ժամ քննարկում:

Անհրաժեշտ նախապայման՝ 244: Մոմենտների նկատմամբ դիմացկուն շրջանակների և պատերի համակարգերի ամրության և ճկունության նախագծում: Կառույցի ընտրության նկատառումներ: Հեծանների և սյուների հանգույցների վարքը, դրանց մանրամասն հետազոտությունը՝ սեյսմիկ ուժերի նկատմամբ ճկունություն ապահովելու նպատակով: Երկրաշարժակայուն նախագծեր ուսումնասիրող առարկաների ամփոփում:

250. Գրունտների մեխանիկա և հիմքերի ճարտարագիտություն (4): Շաբաթական երեք ժամ դասախոսություն և մեկ ժամ քննարկում:

Անհրաժեշտ նախապայման՝ դեֆորմացվող մարմինների մեխանիկայի հիմնական դասընթաց: Գրունտների լարումները, պնդեցման և նստեցման վերլուծություն, կապակցված և չկապակցված գրունտների ճեղքման ուժգնությունը, թեք հարթակի կայունությունը: Երկրի ճնշման տեսությունները, ծանրությանը դիմանալու կարողությունը: Ծանրություն պահող կառույցների, ծանծաղ և խորը հիմքերի նախագծման նկատառումներ: Գրունտների որակի բարելավումը հիմքերի ամրության նպատակով:

255. Գրունտների դինամիկա (4): Շաբաթական երեք ժամ դասախոսություն և մեկ ժամ քննարկում:
Անհրաժեշտ նախապայման՝ 221 և 250: Դինամիկ գրունտի հատկությունները և նրանց որոշումը: Ալիքի տարածումը առաձգական և առաձգամածուցիկ միջավայրում: Հիմքերի տատանումներ: Սեյսմիկ կենտրոնի ցուցմունքների վերլուծություն: Գրունտ-կառույց փոխազդեցության վերլուծության ներածություն:

260. Երկրաշարժակայուն ճարտարագիտության վերլուծություն (4): Շաբաթական երեք ժամ դասախոսություն և մեկ ժամ քննարկում:
Անհրաժեշտ նախապայման՝ 245 և 250: Երկրաշարժակայուն ճարտարագիտության առաջնակարգ մեթոդների հետազոտում, գրունտ-հիմք-կառույց, կառույց-հեղուկ փոխազդեցություններ, հակազդեցություն գրունտի բազմաբաղադրիչ շարժմանը, տարածական փոփոխելիության հետևանքներ բազմահենակային կառույցների վրա, երկրորդական համակարգերի հակազդումը, էներգիայի ցրման մեթոդները, հիմքի մեկուսացում:

290. Հատուկ թեմաներ (4):
Անհրաժեշտ նախապայման չկա: Առաջնակարգ ուսումնասիրություններ հատուկ թեմաներով, որոնք ընտրվում են տարվա ընթացքում:

298. Ճարտարագիտության սեմինար (1):
Անհրաժեշտ նախապայման չկա:
Տարբեր թեմաներով ճարտարագիտության սեմինարներ, որոնք անցկացնում են հրավիրված դասախոսները: Գնահատվում է ստուգարքային հիմունքով:

299. Անհատական հետազոտություն (1–8):
Անհրաժեշտ նախապայման՝ երկրորդ կուրսում սովորելու իրավունք:
Առաջնակարգ թեմաներով ուսումնասիրություն կամ հետազոտություն, որի հիման վրա պետք է կատարվի ճարտարագիտության մագիստրոսի դիպլոմային աշխատանքը: Կարելի է վերահանձնել: Գնահատվում է ստուգարքային հիմունքով:

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

Արդյունաբերական ճարտարագիտության քոլեջ ընդունվել կարող են ճարտարագիտության ցանկացած մասնագիտությամբ բուհերի շրջանավարտները: Մաթեմատիկայի կամ ֆիզիկայի գծով շրջանավարտների ընդունելությունը կախված է նրանց անցած առարկաներից:

ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԸ

210. Հավանականությունների տեսություն (4): Շաբաթական երեք ժամ դասախոսություն և մեկ ժամ քննարկում:
Անհրաժեշտ նախապայման չկա: Հավանականության՝ աքսիոմները, դիսկրետ և անընդհատ պատահական մեծություններ, հավանականության բաշխումները, պայմանական հավանականություն և վիճակագրական անկախություն, մաթեմատիկական սպասում, պատահական մեծությունների ձևափոխություն: Կենտրոնական սահմանային թեորեմը: Բինոմական, Պուասոնի և նորմալ բաշխումների մոդելներ, Մարկովի շղթա: Ճարտարագիտական կիրառություններ:

211. Ճարտարագիտական վիճակագրություն (4): Շաբաթական երեք ժամ դասախոսություն և մեկ ժամ քննարկում:
Անհրաժեշտ նախապայման՝ 210: Վիճակագրական եզրակացությունների տարրեր՝ կետային և ինտերվալային գնահատում, ռեգրեսիա և կոռելացիա, հիպոթեզի ստուգում: Առավելագույն հավանականության գնահատում, Բայեսյան վերագնահատում, համալույծ բաշխումներ: Վիճակագրական համակարգչային ծրագրերի կիրառում:

215. Ճարտարագիտական տնտեսագիտություն (4): Շաբաթական երեք ժամ դասախոսություն և մեկ ժամ քննարկում:
Անհրաժեշտ նախապայման՝ 210 կամ նմանատիպ դասընթաց: Տնտեսական ներդրումների այլընտրանքների ուսումնասիրություն: Դրամի ժամանակային արժեքի և ներդրման նվազագույն ընդունելի էֆեկտիվության հասկացությունները: Կանխիկ դրամի վերլուծություն ըստ ընդունված տարբեր չափանիշների՝ ներկա արժեքի, ապագա արժեքի, ներդրման ներքին էֆեկտիվություն, ներդրման արտաքին էֆեկտիվություն: Մաշվածություններ և հարկեր: Որոշումների ընդունում անո-

ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՊՐՈՑ



Վարդան Ոսկանյան, Հայաստանի արտաքին գործերի փոխնախարար



Դոկտոր Նիկոլ Շահգալդյանը ՀԱՀ-ի քաղաքագիտության և միջազգային գործերի դպրոցի դեկանի պաշտոնակատարն է: Քաղաքագիտության դոկտորի կոչումն ստացել է Կոլումբիայի համալսարանից: 1980–1992 թթ. եղել է «Ռանդ» ընկերության քաղաքագիտության բաժնի ավագ աշխատակից: Դասախոսել է Կոլումբիայի և Փենսիլվանիայի համալսարաններում: Միջին արևելքի քաղաքականության չորս հատորյակների հեղինակն է: 1992 թ.-ից զբաղեցնում է Հայաստանի Հանրապետության նախագահի խորհրդականի պաշտոնը:

ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԾՐԱԳԻՐԸ

Քաղաքագիտության դպրոցի հիմնադրման նպատակն է քաղաքագիտության ուսուցանման արևմուտքի փորձը ներկայացնել Հայաստանին: Երկար տարիների կոմունիստական գաղափարախոսությունից հետո առաջացել էր գիտության նկատմամբ նոր՝ օբյեկտիվության և վերլուծության վրա հիմնված մոտեցում զարգացնելու պահանջ: Դպրոցը ձգտում է կրթական հիմքեր ապահովել Հայաստանում ազատախոհ, բազմակարծիք և ժողովրդավարական հասարակության ստեղծման համար, որը կնպաստի տարածաշրջանում առավել բաց և լայն հաղորդակցմանը:

Դպրոցն առաջարկում է երկու տարվա ուսումնական ծրագիր, որն ավարտելուց հետո շնորհվում է քաղաքագիտության մագիստրոսի կոչում: Ծրագիրն ուսանողներին տալիս է մեծ ունակություններ, նրանց առջև բացելով կառավարական օրգաններում որպես ապագա հմուտ դիվանագետներ, վարչարարներ, քաղաքականության վերլուծողներ և հետազոտողներ աշխատելու հեռանկարներ: Ուսումնական ծրագիրը նախատեսում է մասնագետներ պատրաստել երկու փոխկապակցված ենթաճյուղերում: «Հասարակական քաղաքականություն» ծրագրի ուսանողները համալսարանն ավարտելուց հետո կաշխատեն հասարակական ծառայություններում որպես վարչական աշխատողներ, իսկ մյուս՝ «Միջազգային հարաբերություններ» ծրագիրն ավարտողները կհամալրեն Հայաստանի դիվանագետների շարքերը:

Ենթաճյուղերի համապարփակ և ճկուն ուսումնական ծրագիրը ուսանողներին թույլ է տալիս անդրադառնալ միջազգային և տարածաշրջանի քաղաքականությունների փոխկապակցվածության և սոցիալ-տնտեսական հարցերին՝ դրանք կապելով Հայաստանի ազգային զարգացման հետ: Մեր մոտեցումն ուսուցմանը բազմակողմանի է, և մենք խիստ կարևորություն ենք տալիս ուսանողներին քաղաքականության ձևավորման, գնահատման և իրականացման մասին հստակ պատկերացում տալուն:

Անկախացմանը հաջորդած վերջին մի քանի տարիների ընթացքում Հայաստանում և տարածաշրջանում տեղի են ունեցել հսկայական քաղաքական, տնտեսական և հոգեբանական փոփոխություններ: Արագ փոփոխվող աշխարհը հատուկ խնդիրներ է դնում քաղաքագիտության դպրոցի առջև: Մեր առաքելությունը Հայաստանում և Կովկասյան տարածաշրջանում անկախ պետականության և ժողովրդավարական քաղաքական կուլտուրայի մտավոր հիմքերի ամրապնդմանը նպաստելն է: Այդպես մենք նպատակ ունենք կրթել ապագա պետական գործիչներ, ոչ թե մոտակա մի քանի տարվա, այլ խոստումնալից հեռավոր ապագայի համար:

Նիկոլ Շահգալդյան

ՔՈԼԵՋՆ ԱՎԱՐՏԵԼՈՒ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Քաղաքագիտության մագիստրոսի կոչում ստանալու համար ուսանողները պետք է հաջողությամբ լրացնեն 60 միավոր դասընթաց, որից 24-ը՝ հիմնական դասընթացներից և 4-ը՝ պրակտիկայից: Բաժնի յուրաքանչյուր միավոր դասընթաց ներկայացնում է շաբաթական չորս ժամ պարապմունք, եթե այլ բան չի նշված:

Ամբողջ ծրագիրն անցնող ուսանողը պետք է ամեն քառորդում անցնի նվազագույնը 12 միավոր դասընթաց և ուսումնական ծրագիրն ավարտի առնվազն երեք տարում: Այդ ժամկետը լրանալուց հետո ուսանողի թեկնածությունն ինքնըստինքյան դուրս է գալիս: Քառորդում 12 միավորից մեծ ծանրաբեռնվածություն ունենալու համար անհրաժեշտ է դպրոցի դեկանի պաշտոնակատարի նախնական թույլտվությունը: Բոլոր պարտադիր առարկաներից գնահատումը կատարվում է տառերով:

ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀՈՂ ԾՐԱԳԻՐ

Քաղաքագիտության դպրոցի բոլոր ուսանողները պարտավոր են առաջին ուսումնական տարվա ընթացքում անցնել 6 հիմնական դասընթաց (24 միավոր), որից հետո, երկրորդ ուսումնական տարում, պետք է մասնագիտանան «Հասարակական քաղաքականություն» կամ «Միջազգային հարաբերություններ» ենթաճյուղերում: Երկու ենթաճյուղերի ուսումնական ծրագրերն էլ բաղկացած են 24 միավոր դասընթացներից, ներառյալ պրակտիկան որևէ նախարարությունում կամ պետական գործակալությունում:

ՀՐԱՎԻՐՎԱԾ ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՊՐՈՑ, 1994Թ.*

դոկտոր **Վարդգես Լ. Բրուսալյան**, Լոս Անջելեսի Կալիֆորնիայի համալսարան
տնտեսագիտության և ֆինանսների պրոֆեսոր
Նորթրիջի Կալիֆորնիայի պետական համալսարանի նախկին պրոֆեսոր
Կառավարման և բյուջեի գրասենյակի նախկին ավագ տնտեսագետ

դոկտոր **Դոն Ֆուլլեր**, Պիտսբուրգի համալսարան
հասարակական ղեկավարման պրոֆեսոր
Հյուսիսային Կալիֆորնիայի համալսարանի միջազգային հասարակական կառավարման կենտրոնի տնօրեն

դոկտոր **Հարրի Իզմիրլյան**, Բերքլիի Կալիֆորնիայի համալսարան
քաղաքագիտության և հասարակական ղեկավարման պրոֆեսոր
Բոլի պետական համալսարանի պրոֆեսոր, Մունցի, Ինդիանա

դոկտոր **Լևոն Մարաշլյան**, Լոս Անջելեսի Կալիֆորնիայի համալսարան
քաղաքագիտության կրտսեր պրոֆեսոր (Ֆուլբրայթի թոշակառու)
Կալիֆորնիայի Գլենդեյլի համայնական քոլեջի կրտսեր պրոֆեսոր

դոկտոր **Նիկոլ Բ. Շահգալդյան**, Կոլումբիայի համալսարան
ՀԱՀ-ի քաղաքագիտության պրոֆեսոր, քաղաքագիտության և միջազգային հարաբերությունների դպրոցի դեկանի պաշտոնակատար
նախկինում՝ «Ռանդ» ընկերության աշխատակազմի ավագ անդամ, Սանտա Մոնիկա, Կալիֆորնիա

դոկտոր **Դագլաս Շումավոն**, Կալիֆորնիայի համալսարան Սանտա Բարբարայում
քաղաքագիտության և հասարակական ղեկավարման պրոֆեսոր
Մայամիի համալսարանի քաղաքագիտության պրոֆեսոր, Օհայո

ԱՄՆ-ի դեսպան Հարրի Գիլմորը
ՀԱՀ-ի դասախոսներ Ա. Մայքլ Քոնրադի (ձախից)
և Ռոբերտ Թեմբեկյանի (աջից) հետ:

* Դասախոսների վերջին աշխատավայրը և զբաղեցրած պաշտոնը գրված են շեղատառ:

Ռոբերտ Հ. Թեմբեկչյան, իրավաբանության դոկտոր, Ֆորդհամի համալսարան
քաղաքագիտության կրտսեր պրոֆեսոր (Ֆուլբրայթի թոշակառու)
ավագ կառավարիչ, Նյու Յորքի նահանգի դատական գործերի վարման կոմիտեի փոխկառավարիչ

ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԸ

500. Արևմտյան քաղաքական մտածելակերպը (4): Արևմուտքի դպրոցների քաղաքական և սոցիալ-տնտեսական մտքի պատմության ուսումնասիրություն՝ վաղ շրջանից մինչև մեր օրերը, ըստ Պլատոնի, Արիստոտելի, Ավգուստինի, Աքվինացու, Մաքիավելու, Հոբսի, Լոկի, Ռուսսոյի, Մոնտեսքյուի, Սմիթի, Բուրկի, Հեգելի, Միլի, Մարքսի, ինչպես նաև ազգայնականության, լիբերալիզմի, սոցիալիզմի, պահպանողականության, պրագմատիզմի, պուրիտանիզմի, սահմանադրականության, բռնատիրության և պետական հովանավորչության հասարակարգերի ժամանակակից տեսաբանների աշխատությունների ուսումնասիրություն:

510. Համեմատական քաղաքական համակարգեր (4): Արդյունաբերական, զարգացող և սոցիալիստական որոշ երկրների քաղաքական վերնախավի, պետական հաստատությունների և քաղաքական գործընթացների համեմատական վերլուծություն: Որպես օրինակ ընտրված են Միացյալ Նահանգները, Բրիտանիան, Ֆրանսիան, Գերմանիան, Հնդկաստանը Սաուդյան Արաբիան, Չինաստանը, Եգիպտոսը, Իրանը, Մեքսիկան, Ռուսաստանը, Սիրիան և Իսրայելը:

520. Միջազգային քաղաքական հարաբերություններ (4): Ժամանակակից քաղաքականության և դիվանագիտության, արտաքին քաղաքականության մշակման ստրատեգիական խնդիրների, կոնֆլիկտային իրավիճակների կառավարման և լուծման մեթոդների հարցեր և տեսություններ:

530. Ժողովրդավարությունը Միացյալ Նահանգներում (4): Ամերիկյան քաղաքական համակարգի և գործող պետական կառույցների հիմնական դրույթների ուսումնասիրություն ազգային, պետական և տեղական մակարդակներով: Պետականության, իշխանությունների տարանջատման, վերահսկման և հավասարակշռության, սահմանադրական զարգացման սկզբունքների ուսումնասիրություն:

540. Համաշխարհային տնտեսական համակարգեր (4): Ժամանակակից տարբեր երկրների տնտեսագիտական տեսությունների և տնտեսական գործունեության համեմատական վերլուծություն՝ կենտրոնանալով Միացյալ Նահանգների, Ճապոնիայի, Կանադայի և Արևմտյան Եվրոպայի երկրների վրա: Նախկին կոմունիստական երկրներում և արևմտյան տնտեսական համակարգերում սեփականաշնորհման և շուկայական անցման գործընթացների ուսումնասիրություն:

550. Հասարակական ղեկավարում (4): Բյուրոկրատիայի դերը ժամանակակից պետության մեջ, հասարակական քաղաքականության ձևավորման և իրականացման հարցերի ուսումնասիրություն, պլանավորումը, ծրագրավորումը և որոշումների ընդունումը քաղաքականության մշակման բյուրոկրատական գործընթացներում:

600. Համեմատական հասարակական քաղաքականություն (4): Տարբեր քաղաքական համակարգերում տարբեր վարչական ավանդույթների և գործընթացների վերլուծություն՝ բյուրոկրատիայի դերի և նշանակության, բյուրոկրատական էթիկայի, խնդիրների լուծման մեթոդների և հասարակական պատասխանատվության հարցերի շեշտադրմամբ:

610. Հասարակական ֆինանսներ և բյուջետավորում (4): Արևմտյան որոշ տերությունների հասարակական ֆինանսավորման և բուջետավորման համակարգերի, հատկապես պլանավորման, ծրագրավորման, գումարների հատկացման, հարկերի սահմանման և մոդելավորման գործընթացների ուսումնասիրում:

620. Հասարակական աշխատակազմի ղեկավարում (4): Կառավարության աշխատողներին կառավարելու հիմնական հասկացությունների ու մեթոդների ուսումնասիրում՝ հատուկ ուշադրություն դարձնելով կադրերի համալրման, ընտրության, պաշտոնների դասակարգման, առաջքաշման, վերապատրաստման, խրախուսման, աշխատանքի գնահատման, գործունեության ընդլայնման, առաջնորդելու կարողության և հովանավորության հարցերին:

630. Կազմակերպության վարք (4): Կազմակերպության և բյուրոկրատական վարքի հիմնական հասկացությունների ու տեսությունների ուսումնասիրում, հսկողության, կայունության ու փոփոխությունների ստրատեգիաները ժամանակակից պետական համակարգերում:

640. Համաշխարհային քաղաքատնտեսություն (4): Համաշխարհային ասպարեզում քաղաքական, սոցիալական և տնտեսական ուժերի փոխազդեցությունը և

դրանց ազդեցությունը միջազգային առևտրի, արտասահմանյան օգնության և տնտեսական կախվածության վրա: Բազմազգ ընկերություններում և կարևոր միջազգային կազմակերպություններում, ինչպիսիք են Առևտրի և սակագների գլխավոր համաձայնագիրը, Հետազոտությունների և զարգացման միջազգային բանկը, Սննդի և թմրանյութերի միջազգային կառավարումը, Միջազգային կառավարման ֆոնդը և ՄԱԿ-ի առևտրի և զարգացման կոնֆերանսը, որոշումների ընդունման ժամանակ առաջացող հարցերը:

645. Ռուսաստանի և ԱՊՀ երկրների քաղաքականությունը (4): Հետխորհրդային շրջանում վարած քաղաքականության պատմական ուսումնասիրում: Գաղափարախոսական, ազգային և աշխարհաքաղաքական գործոնները քաղաքական վերափոխությունների և զարգացման, անկախ պետության կառուցման, քաղաքական կառավարման և միջպետական վեճերի լուծման խնդիրներում:

650. Առաջնորդելու կարողություն և վճիռների կայացում (4): Պետական պաշտոնյաների կառավարման ունակությունների ուսումնասիրում՝ իշխանության ու ազդեցության ճիշտ ընբռնման և օգտագործման, ղեկավարման և որոշումների ընդունման ճիշտ մեթոդների և միջոցների ընտրման, ինչպես մաև որոշումներ կայացնելիս բարոյական երկընտրանքների, մշակութային տարբերությունների և քաղաքական ճնշումների հաղթահարման հարցերի շեշտադրմամբ:

655. Իսլամական աշխարհի քաղաքականությունը (4): Արաբական արևելքի, Թուրքիայի և Իրանի քաղաքականության ուսումնասիրում, սկսած երկրորդ աշխարհամարտից: Միջին արևելքի գործիչները, հաստատությունները ու գործընթացները: Տարածաշրջանում սոցիալ-քաղաքական փոփոխությունների, իսլամի դերի, միջազգային ազդեցությունների և միջպետական հարաբերությունների ուսումնասիրում:

660. Համեմատական իրավական համակարգեր և մարդու իրավունքները (4): Հիմնական իրավական համակարգերը և դրանց ազդեցությունը հասարակական քաղաքականության ու մարդու իրավունքների, արդարադատության և սոցիալ-տնտեսական բարեկեցության վրա: Շեշտը դրվում է ժամանակակից ժողովրդավարական իրավական ավանդույթների սոցիալական արմատների և պատմական զարգացման հարցերի վրա:

670. Միջազգային օրենք և կազմակերպություն (4): Միջազգային օրենքի ծագման աղբյուրների և հիմնական դրույթների, պատմական զարգացման և միջպետական հարաբերություններում դրանց կիրառման ուսումնասիրում: Տեղական և միջազգային գլխավոր կազմակերպությունները և դրանց դերը բանավեճերի լուծման հարցում: Միացյալ ազգերի կազմակերպության դերը խաղաղության պահպանման և տնտեսական զարգացման հարցերում:

675. Ամերիկայի արտաքին քաղաքականությունը (4): Միացյալ Նահանգների արտաքին քաղաքականության ձևավորման և իրականացման վերլուծություն՝ շեշտը դնելով նախագահության, կոնգրեսի, շահագրգիռ խմբերի, արտասահմանյան երկրների և միջազգային կազմակերպությունների վրա:

680. Քաղաքացիություն և հասարակական բարոյագիտություն (4): Բարոյագիտության ներածություն, բարոյականության հարցերի ու երկընտրանքների սոցիալական և կազմակերպական աղբյուրները քաղաքականության մշակման և իրականացման ժամանակ: Ժամանակակից բարոյագիտության, ազատության բնական ձգտման, արդարության և մարդու իրավունքների բնույթը: Ուշադրություն է դարձվում առանձնահատուկ խնդիրներին, ինչպիսին, օրինակ, պետական անձանց պատասխանատվության հարցն է:

685. Եվրոպական միության քաղաքականությունը (4): Եվրոպայի պատմությունը և զարգացումը սկսած երկրորդ աշխարհամարտից, ՆԱՏՕ-ի դերը, Եվրոպական տնտեսական համայնքի առաջացումն ու նրա հարաբերությունները Միացյալ Նահանգների, Ռուսաստանի, Ճապոնիայի և զարգացող երկրների հետ:

690. Հայաստանի համեմատական զարգացման կառավարումը (4): Հայաստանի զարգացող վարչական համակարգի և նրա հիմնական առանձնահատկությունների վերլուծությունը: Հասարակական ղեկավարման միջավայրը, ընդգրկման շրջանակները, դրսևորման ձևերը և խնդիրները՝ շեշտը դնելով վերակառուցման և հաստատությունների բարեփոխման փորձերի վրա:

695. Հայաստանի արտաքին քաղաքականության մշակում (4): Հայկական արտաքին քաղաքականության այլընտրանքային հիմքերի վերլուծությունը՝ սկսած անկախացումից: Տեղական, քաղաքական, միջազգային և տնտեսական գործոնները, արտաքին քաղաքականության իրականացման և ապագայում դրա փոփոխման վրա ազդող սոցիալական, մշակութային, պատմական, աշխարհաքաղաքական և ժողովրդագրական ազդակները:

700 Ա. Հասարակական քաղաքականության պրակտիկա (4):

700 Բ. Դիվանագիտական պրակտիկա (4):

ՎԿԱՅԱԳԻՐ ՇՆՈՐՀՈՂ ԾՐԱԳՐԵՐ



Դոկտոր Ռաս Քամփբելը ՀԱՀ-ի անգլերենի ծրագրերի դեկանի պաշտոնակատարն է, ինչպես նաև Լոս Անջելեսի Կալիֆորնիայի համալսարանի լեզվական միջոցների կենտրոնի տնօրենն ու նույն համալսարանի կիրառական լեզվաբանության բաժնի վաստակավոր պրոֆեսոր:

ՎԿԱՅԱԳԻՐ «ԱՆԳԼԵՐԵՆԻ՝ ՈՐՊԵՍ ՕՏԱՐ ԼԵԶՎԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ» ԾՐԱԳՐԻՑ

1995 թ. գարնանային քառորդից ՀԱՀ-ում կսկսի գործել մեկ տարի տևողությամբ «Անգլերենի՝ որպես օտար լեզվի ուսուցումը» վկայագիր շնորհող ծրագիրը: Ծրագիրը նախատեսված է բաձրագույն կրթություն ունեցողների համար և նպատակ ունի պատրաստել անգլերենի ուսուցիչներ, որոնք հետագայում կունենան դասավանդելու, ուսումնական ծրագրեր մշակելու, դասագրքեր կազմելու և երբեմն նաև ուսուցիչներ վերապատրաստելու պարտականություններ: Ծրագիրն ընդգրկում է Հայաստանի դպրոցներում, համալսարաններում և լեզվի ինստիտուտներում անգլերենի դասավանդման բոլոր մակարդակները:

Ընդունելության պահանջներն այս ծրագրի դիմորդների համար նույնն են, ինչ որ կոչում շնորհող ծրագրերի դիմորդների համար: Բացի «Ընդունելությունը» բաժնում 25-րդ էջից շարադրված համալսարանի ընդունելության ընդհանուր պահանջները բավարարելը, այս ծրագրում ընդգրկվելու համար դիմորդները պետք է TOEFL-ի կամ ՀԱՀ-ի կազմակերպած համարժեք անգլերենի գնահատման քննությունից հավաքեն առնվազն 550 միավոր, ինչպես նաև ունենան բարձրագույն կրթություն անգլերեն, ժամանակակից լեզուներ, լեզվաբանություն, հոգեբանություն կամ համապատասխան այլ մասնագիտություններով: Նախապես լեզվի դասավանդման փորձ ունենալը նախընտրելի է: Այս ծրագրի դիմորդների համար համալսարանը անգլերենի արագացված դասընթացներ չի կազմակերպում:

Ծրագիրը տալիս է ընդհանուր լեզվաբանության, անգլերենի լեզվաբանության, երկրորդ լեզու սովորելու, ուսումնական ծրագրեր մշակելու, լեզվի իմացությունը ստուգելու և ուսումնական նյութերի ընտրության մեթոդների, ինչպես նաև լսարանը ղեկավարելու և լեզվի ուսուցանման միջոցների ու ստրատեգիաների խորը ուսումնասիրման հնարավորություն: Ուսումնական ծրագիրը ներառում է դասընթացներ, սեմինար պարապմունքներ և պրակտիկա: Ուսումնական տարվա յուրաքանչյուր քառորդում առաջարկվում է երկու դասընթաց:

Ռաս Քամփբել

ՎԿԱՅԱԳԻՐ «ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳՐԻՑ



Բժիշկ և հասարակական առողջապահության դոկտոր Հարութ Արմենյանը վկայագիր շնորհող «Հասարակական առողջապահություն» ծրագրի համակարգողն է: Նա Ջոնս Հոպկինսի դպրոցի հիգիենայի և հասարակական առողջապահության պրոֆեսոր է: Եղել է Բեյրութի ամերիկյան համալսարանի դեկան, ինչպես նաև առողջապահության և առողջապահական ծառայությունների զարգացման ծրագրերի ղեկավար մի շարք երկրներում: Հայկական ծխական շրջանների տվյալների հիման վրա կատարում է հետազոտություն խրոնիկական համաճարակաբանություն, աղետներ և պատմական համաճարակաբանություն թեմաներով:

1995 թ. գարնանային կիսամյակից ՀԱՀ-ում կսկսի գործել մեկ տարի տևողությամբ «Հասարակական առողջապահություն» վկայագիր շնորհող ծրագիրը, որի նպատակն է առողջապահության մասնագետներին տալ համապատասխան պատրաստականություն՝ հասարակական առողջապահության ոլորտում աշխատելու համար: Շեշտը դրվելու է հիմնական հասարակական գիտությունների՝ ներառյալ պլանավորման, գնահատման, կառավարման, հաղորդակցման, համաճարակաբանության ու առաջնորդագիտության ասպարեզներում ուսանողների անհատական ունակությունների զարգացման վրա: Ծրագիրը կիրառելու է մոդուլային կառուցվածքը, որը բաղկացած է 3-ից 10 շաբաթ տևողությամբ համապատասխան դասընթացների միավորներից: Երեք մոդուլ նվիրված կլինի հասարակական առողջապահության հիմնական առարկաներին և ուսանողների մոտ քանակական ու վերլուծական հմտություններ զարգացնելուն:

Ընդունելության պահանջները ծրագրի դիմորդների համար նույնն են, ինչ որ կոչում շնորհող ծրագրերի դիմորդների համար: Բացի «Ընդունելություն»-ը բաժնում 25-րդ էջից շարադրված համալսարանի ընդունելության ընդհանուր պահանջները բավարարելը, այս ծրագրում ընդգրկվել ցանկացողները պետք է լինեն բուհի բժշկական, ատամնաբուժական կամ անասնաբուժական բաժինների շրջանավարտներ, և կամ ունենան բակալավրի կոչում ճարտարագիտությունից, բնական և հասարակական գիտություններից կամ համանման բնագավառներից, ինչպես նաև առնվազն երկու տարվա աշխատանքային փորձ առողջապահության կառավարման կամ հասարակական առողջապահության համակարգերում: Անգլերենի բավարար իմացություն չունեցող այն դիմորդների համար, ովքեր պետք է մասնակցեն անգլերենի արագացված դասընթացներին, դրանք կսկսվեն 1994թ. աշնանային քառորդից:

Ուսումնական ծրագրերի մասին մանրամասն տեղեկություն կտրվի 1995 թ. սկզբին:

Հարութ Արմենյան

ՀԱՀ-Ի ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ



ԳՈՐԾԱՐԱՐ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Գործարար հետազոտությունների և զարգացման կենտրոնը հիմնադրվել է 1992 թ.՝ շուկայական տնտեսության անցման շրջանում Հայաստանի տնտեսական զարգացմանը նպաստելու նպատակով: Կենտրոնը ղեկավարվում է գործարարության և կառավարման քոլեջի կողմից: Դասախոսներից, տեղական մասնագետներից և ասիստենտ շրջանավարտներից կազմված աշխատանքային խմբերի միջոցով կենտրոնն իրականացնում է կազմակերպված հետազոտական և զարգացման ծրագրեր: 1992 թ. կենտրոնն ուներ 35 գիտաշխատողներ, ասիստենտներ և ծրագրերի իրականացմանն օժանդակող այլ աշխատակիցներ: Ներկայումս կենտրոնում իրականացվող որոշ ուսումնասիրություններ ու հետազոտման ծրագրեր ընդգրկում են Հայաստանի հետևյալ բնագավառները. տեքստիլ արդյունաբերություն, օդային բեռափոխադրումների կառամատույցի նախագծում, տուրիզմի և հյուրանոցային ծառայությունների զարգացում, էլեկտրական լամպերի գործարանի կատարելագործում, սառնարանային համալիրի գնահատում, Հայաստանի տնտեսական ակնարկ, տեխնիկական թարգմանություններ, գործարարության առաջացման ուսումնասիրություն, մասնագիտական զարգացում և տնտեսական կանխորոշում:

Տրամադրության տակ ունենալով CD-ROM տվյալների բազաներ և միջազգային կապի սարքավորումներ, կենտրոնը նպատակ ունի հեռատիպի, հեռակապի և էլեկտրոնային փոստի միջոցով ստեղծել միջազգային հետազոտությունների հնարավորություն:

Առաջիկա մի քանի տարիներին գործարար հետազոտությունների և զարգացման կենտրոնի գործունեությունն ուղղված կլինի՝

1. Հայաստանի և տարածաշրջանի տնտեսական, գործարար և արդյունաբերական ոլորտների մասին ճշգրիտ տվյալների և տեղեկատվության համակարգի մշակմանը,
2. տեղական և արտասահմանյան ձեռնարկությունների համար տեղեկատվական և փորձագիտական կենտրոն ծառայելուն,
3. տարածաշրջանի տնտեսական և գործարար կանխատեսման համակարգի մշակմանը,
4. միջազգային կազմակերպությունների և ընկերությունների համար արդյունաբերության զարգացման, սեփականաշնորհման, ֆինանսական ծառայությունների ծրագրերի համար ուսումնասիրությունների կատարմանը,
5. կենտրոնի ուսումնասիրությունների և հետազոտությունների վերաբերյալ գիտական զեկույցների հրատարակմանը:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Կենտրոնը հիմնադրվել է 1994 թ. գարնանը: Այն համալսարանի, Հայաստանի էկոնոմիկայի նախարարության և ԱՄՆ-ի Միջազգային զարգացման գործակալության համատեղ ծրագիրն է: Կենտրոնը կատարում է Հայաստանի շուկայական տնտեսության զարգացմանն ու պահպանմանը վերաբերող տնտեսագիտական վերլուծություններ և հետազոտություններ:

Հայաստանում սեփականաշնորհման ներկա գործընթացի ժամանակ առաջացող խնդիրների համար կիրառելով գիտնականների և տնտեսագետների տնտեսագիտական հետազոտությունների արդյունքները՝ կենտրոնը նպատակ ունի վարչահրամայական տնտեսությունից շուկայական համակարգին անցման շրջանում երկխոսություն սկսել Հայաստանի քաղաքականությունը որոշողների և միջազգային գործակալությունների ու այլոց միջև՝ տնտեսական քաղաքականության այլընտրանքային ուղիների և հետևանքների շուրջ: Նման համագործակցության հիման վրա կենտրոնը մշակում է առաջարկներ քաղաքականության, տեխնիկական օգնության, վերապատրաստման ծրագրերի և օժանդակման համակարգերի վերաբերյալ:

Կենտրոնը ձգտում է ամուր կապեր հաստատել Հայաստանի և Ամերիկայի մասնագետների միջև տնտեսագիտության, ֆինանսների, փողի ու բանկային գործի, ֆինանսական կառավարման և մասնավոր սեկտորի բնագավառներում:

Տնտեսական քաղաքականության հետազոտության և վերլուծության կենտրոնը ֆինանսավորվում է ԱՄՆ-ի Միջազգային զարգացման գործակալության կողմից:

ՃԱՐՏԱՐԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

1992 թ. հիմնադրված հետազոտական կենտրոնը ղեկավարվում է Ճարտարագիտության քոլեջի կողմից: Կենտրոնի նպատակը Հայաստանի և տարածաշրջանի արդյունաբերական և տնտեսական զարգացմանը նպաստող հետազոտություններ կատարելն է: Այն ՀԱՀ-ի դասախոսներին, տեղացի գիտնականներին ու ճարտարագետներին համախմբում է տարբեր ծրագրերի շուրջ, որոնք ստեղծվում են Հայաստանում կամ ֆինանսավորվում արտասահմանյան հովանավորների կողմից: Բարձր առաջադիմություն ունեցող ուսանողները աշխատում են որպես ասիստենտներ և անգնահատելի փորձ ձեռք բերում մասնագետների կողքին ծրագրերի վրա աշխատելիս: Հրավիրված դասախոսները, տեղացի գիտնականներն ու ճարտարագետները և ուսանողները աշխատանքի ընթացքում զարգացնում են իրենց անհատական ունակությունները և նպաստում Հայաստանի ու տարածաշրջանի տնտեսական, արդյունաբերական և մտավոր պայմանների բարելավմանը:

1992 թ.-ից սկսած կենտրոնում աշխատել են ավելի քան 20 ուսանող ասիստենտ: Ավելի քան 70 գիտնականներ և ճարտարագետ-հետազոտողներ աշխատել կամ պարգևատրվել են կենտրոնում: Հետազոտական ծրագրերն ընդգրկում են բարձրահարկ շինությունների երկրաշարժակայունության ուսումնասիրությունից մինչև մեխանիկայի տեսական ուսումնասիրությունները, Հայաստանի, ԱՄՆ-ի, Ճապոնիայի և այլ երկրների կառույցների համեմատական վերլուծությունից մինչև էներգիայի փոքր աղբյուրների արդյունավետության հետազոտումը: Կենտրոնում վերջերս մշակված վերջին ծրագրերի մասն է կազմում շենքերի սեյսմիկ պաշտպանվածության կաուչուկե պողպատապատ առաջին առանցքակալների արտադրումն ու փորձարկումը Հայաստանում:

Ճարտարագիտական հետազոտությունների կենտրոնը գտնվում է ՀԱՀ-ի շենքում և ունի իր լաբորատորիաներն ու համակարգչային հնարավորությունները՝ IBM, IBM-ի հետ համաձայնեցված և «Մակինտոշ» տիպի անհատական համակարգիչներ, Unix հիմքով աշխատանքային կայաններ, լազերային տպիչ, գծագրող սարք, սկաներ և մոդեմներ: ՀԱՀ-ի ուսումնական համակարգչային լաբորատորիայի միջոցով կենտրոնը կարող է օգտվել լրացուցիչ համակարգիչներից և էլեկտրական փոստից: Կենտրոնը սերտ կապեր ունի Հայաստանի խոշոր գիտահետազոտական հաստատությունների և լաբորատորիաների հետ, կարող է համագործակցել դրանց աշխատակազմի հետ և օգտագործել նրանց տեխնիկական միջոցները: ԱՄՆ-ի Միջազգային զարգացման գործակալության տրամադրած միջոցներով կենտրոնը ներկայումս հիմնադրում է կառույցների դինամիկայի լաբորատորիա, որն ունի 1մ x 2մ տատանման սեղան՝ երկրաշարժերի ազդեցությունները շենքերի մասշտաբային մոդելների վրա վերարտադրելու համար և համակարգիչներով վերահսկվող մեքենաների ու արագ մոդելավորման սարքերի ժամանակակից արտադրական լաբորատորիա:

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԵՏԱԶՈՏՄԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Այս կենտրոնը գործում է ճարտարագիտական հետազոտական կենտրոնի շրջանակներում: Այն աջակցում է համալսարանի կրթական ծրագրին՝ մշակելով ու կազմակերպելով շրջակա միջավայրի իրազեկության դասընթացներ, ինչպես նաև համակարգում է Հայաստանի Հանրապետության մի շարք ինստիտուտների և հետազոտական կենտրոնների հետ կատարվող աշխատանքները: «Շրջակա միջավայրի իրազեկություն» ծրագրի օրինակ կարող են հանդիսանալ արդյունաբերական ճարտարագիտության բաժնի ուսանողների համար կազմակերպված շրջակա միջավայրի ռիսկի կառավարման դասընթացը, շրջակա միջավայրի ուսումնասիրության դասընթացը, ինչպես նաև բոլոր ուսանողների համար կազմակերպված «Շրջակա միջավայրը և հասարակությունը», «Շրջակա միջավայրը և ժողովրդական տնտեսությունը», «Շրջակա միջավայրը և ներքին կառուցվածքը» թեմաներով սեմինարները, որոնց հաճախելը պարտադիր է: Կենտրոնը նախատեսում է շրջակա միջավայրի իրազեկության դասընթացներ կազմակերպել ՀԱՀ-ի բոլոր ուսանողների համար՝ նախքան նրանց ավարտելը:

Կենտրոնի կրթական ծրագրի մասն են կազմում նաև ոչ համալսարանի ուսանողների համար կազմակերպվող կարճատև դասընթացները: Անցյալ տարի այդպիսի դասընթացներ են կազմակերպվել «Շրջակա միջավայրի պահպանման քաղաքականություն և կարգավորում», «Հողի աղտոտվածություն և աղբահանություն» և «Ճառագայթային անվտանգություն» թեմաներով: Նման կարճատև դասընթացները, սեմինարներն ու աշխատանքային քննարկումները ինստիտուտների և պետական գործակալությունների աշխատողներին հնարավորություն են ընձեռում որպես ուսանողներ մասնակցելու միջավայրի ուսումնասիրման և պաշտպանության ընթացիկ հարցերի քննարկմանը:

Կենտրոնի հետազոտությունների շրջանակները լայն են: Հանդես գալով որպես հետազոտական աշխատանքները համակարգող, կենտրոնը համախմբում է Հայաստանի Հանրապետության տարբեր ինստիտուտների և հետազոտական կենտրոնների գիտնականներին, Հայաստանի ամերիկյան համալսարանի դասախոսներին ու ուսանողներին: Գործող հետազոտական ծրագրերից են շրջակա միջավայրի պաշտպանության նախարարության գիտնականների հետ համատեղ իրականացվող «Օդի և ջրի աղտոտվածություն» ծրագիրը և կենդանաբանական հետազոտությունների ինստիտուտի օրնիտոլոգների հետ իրականացվող «Հայաստանի թռչուններ» ծրագիրը, որը հատուկ ուշադրություն է դարձնում անհետացող տեսակներին: Մշակման փուլում գտնվող մյուս ծրագրերը նվիրված են հողերի կորստին, վնասակար քիմիական նյութերին, առողջապահությանն ու շրջակա միջավայրին և շրջակա միջավայրի պաշտպանությանը:

Շրջակա միջավայրի հետազոտման և կառավարման կենտրոնը ֆինանսավորվում է արդյունաբերող պրն Սարգիս Հակոբյանի (Իսթոն, Փենսիլվանիա) առատաձեռն նվիրատվությունից:

ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՅԱՆԵՐԸ, 1994–1995ԹԹ.

դոկտոր **ՄԻՀՐԱՆ Ս. ԱՂԲԱԲՅԱՆ**
Նախագահ

ՍՅՈՒԶԻ Մ. ԱՆՏՈՒՆՅԱՆ, իրավաբանության դոկտոր
Նախագահի հատուկ օգնական

դոկտոր **ԱՏԿԵՆ ԱՐՄԵՆՅԱՆ**
Անգլերենի ծրագրերի տնօրեն

դոկտոր **ՀԱՐՈՒԹ ԱՐՄԵՆՅԱՆ**
Հասարակական առողջապահության վկայագիր շնորհող ծրագրի համակարգող

ԱՆԻ ԲՈՅԱՋՅԱՆ – ՔՈՂԻԿՅԱՆ, գրադարանավարության մագիստրոս
ՀԱՀ-ի գրադարանի ավագ գրադարանավար

դոկտոր **ՖՐԵՆԿ Պ. ԲՐԵՔԼԻՆԳ**
Տնտեսական քաղաքականության հետազոտության և վերլուծության կենտրոնի տնօրեն

դոկտոր **ՌԱՍ ՔԱՄՓԲԵԼ**
Համալսարանի անգլերենի ծրագրերի դեկանի պաշտոնակատար

դոկտոր **ԹԵՈՆԻ ԿՈՆԴՈՍ**
Ընդունելության հարցերով տնօրեն

դոկտոր **Ա. ՄԱՅՔԼ ՔՈՆՐԱԴ**
Ուսանողական ծառայությունների և գրանցման բաժնի տնօրեն

դոկտոր **ԱՐՄԵՆ ՏԵՐ-ԿՅՈՒՐԵՂՅԱՆ**
Ճարտարագիտության քոլեջի դեկան,
Ճարտարագիտական հետազոտությունների կենտրոնի տնօրեն

ՍՈՆԱ ՀԱՄԱԼՅԱՆ, արվեստների բակալավր
Համալսարանի հատուկ դասընթացների բաժնի տնօրեն

դոկտոր **ՍՏԵՓԱՆ ԿԱՐԱՄԱՐԴՅԱՆ**
Գործարարության և կառավարման քոլեջի դեկան,
գործարար հետազոտությունների և զարգացման կենտրոնի տնօրեն

դոկտոր **ՄԻՔԱՅԵԼ ՔՈՒՇԱԿՃԵԱՆ**
Վարչական տնօրեն,
գործարար հետազոտությունների և զարգացման կենտրոնի փոխտնօրեն

դոկտոր **ՆԻԿՈԼ Բ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**
Քաղաքագիտության և միջազգային հարաբերությունների դպրոցի
դեկանի պաշտոնակատար

ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ, 1993Թ.

ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ, 1993Թ.



Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալության կովկասյան առաքելության ղեկավար Սյուզան Գ. Օլդզը 1993թ. ավարտական արարողության ժամանակ



Ճարտարագիտության քոլեջի շրջանավարտ Գրիգոր Մ. Սուքիասյանի բարի երթի խոսքը, 1993թ.

Գործարարության քոլեջի շրջանավարտ Սուսաննա Սահակյանի բարի երթի խոսքը, 1993թ.

ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ, 1993Թ.



ՏԵՂԵԿԱՏՈՒ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հրատարակության պատասխանատու՝ Ալեքսանդր Աղաբեկյան
Խմբագիրներ՝ Անահիտ Օրդյան, Անուշ Գասպարյան
Լուսանկարները՝ Կարեն Ազիզյանի և Հակոբ Հովհաննիսյանի

Տպագրությունը՝ Հայաստանի ամերիկյան համալսարանի